

Կես միլիոնից ավելի քաղաքացիներին զրպարտելու համար Փաշինյանի դեմ հայցեր ներկայացնելուց բացի, արժե մտածել անգործության համար դատի տալու մասին: ՀՀ վարչապետն ի պաշտոնե կոչված է ներկայացնելու ՀՀ շահերը: Մինչդեռ այդ անձը բացարձակ անգործություն է դրսեւորում, երբ զրպարտում են Հայաստանին եւ հայությանը:

Կարդացեք՝ էջ 4



Փաշինյանը գտել է առանց նոր ատոմակայան կառուցելու էներգետիկ ճգնաժամերից խուսափելու ճանապարհը՝ երկրում աշխատող ընկերությունները փակելու, այդ ձեռնարկություններում աշխատող մարդկանց գործազուրկ դարձնելու, արտագաղթի մղելու միջոցով: Եթե մարդիկ արտագաղթեն, հետեւաբար, էլեկտրաէներգիայի պահանջարկ չի լինի:

Կարդացեք՝ էջ 5

Ասում է՝ քանի որ, ընդհանուր առմամբ, ընտրությունների արդյունքը չեղարկելը ծայրահեղ միջոց է, պետք է բոլոր տեղերում այնպիսի լայնածավալ խախտումներ տեսնեինք, որ ասեինք՝ ժողովրդի կամքի արտահայտման ընդհանուր պատկերն աղավաղվել է, քանի որ այդպիսի հետեւության չենք գալիս, ընտրություններն անվավեր չենք ճանաչում:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 120 (4255), 18 հուլիս, շաբաթ, 2026

www.hraparak.am

ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐԸ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-ԻՆ

Մեր տեղեկություններով, 1 ամսով կասեցվել են «Արթիկ» ՔԿՀ պետ Արտակ Ղազարյանի լիազորությունները, եւ կրկին ստուգումներ են սկսվել, երբ ընդամենը վերջերս էին արել եւ խախտումներ չէին հայտնաբերել: Մեր աղբյուրն ասում է, որ վերեւից «վիզ են դրել» «կեղտ» գտնել նրա վրա ու ազատել: Քրեակատարողական ծառայության 35-ամյա պետ Ծովինար Թադեւոսյանը, որն այդ պաշտոնին նշանակվել է միայն այն արժանիքի համար, որ Սրբուհի Գալյանի մտերիմն է, չի հանդուրժում փորձառու կադրերին, հատկապես՝ նրանց, որոնք հակադրվում են իրեն, առարկում իր հրամաններին, ինչը եղել է Ղազարյանի դեպքում: Նրան այդ հարցում աջակցում է տեղակալ Սահակ Գրիգորյանը: Նախ «Արթիկ»-ի ռեժիմի պետ Արթուր Դանիելյանին են ազատել, ստիպել, որ պետի դեմ «ցուցմունք» տա, նա հրաժարվել է ու կորցրել աշխատանքը: Հիմա կենտրոնացել են պետի վրա: Հիշեցնենք, որ Ղազարյանը մոտ մեկ տարի առաջ է նշանակվել այդ պաշտոնին, այն բանից հետո, երբ բերդում կալանավորներն անհնազանդության գործողություններ էին արել, ազատել էին ղեկավար կազմին եւ փորձառու կադր համարվող Ղազարյանին, որ մինչ այդ «Սեւան» ՔԿՀ պետն էր, տեղափոխել էին «Արթիկ»՝ կարգուկանոն հաստատելու: Մեր աղբյուրի պատմելով՝ արշալույսները խաղաղ չեն նաեւ «Գորիս» ՔԿՀ-ում: Այստեղ էլ օրերս երկու հերթափոխի աշխատակիցներ միասին ազատման դիմումներ են գրել՝ հոգնելով ստեղծված վիճակից, երբ ամեն անկապ պատճառով ստուգումներ են անում:

Նախորդ գումարման ԱԺ-ն նորանկախ Հայաստանի պատմության ամենակռվարար խորհրդարանն էր, որտեղ ձեռնամարտի, անգամ ոտնամարտի էին դիմում: ՔՊ-ն որոշել է նոր ԱԺ մեկնարկն էլ նախորդի քոպի-փեստով անել՝ սադրել, հրահրել ընդդիմադիրներին, որ մի քանիսի վախը բռնեն: Հատկապես իշխանության թիրախում են «Ուժեղ Հայաստանի» ներկայացուցիչները, առաջին հերթին՝ Էդգար Ղազարյանը, որը հաճախ է ՔՊ-ի ցավոտ տեղերին խփում: Այս սցենարի մասին տեղյակ են նաեւ ընդդիմադիր թիմերում եւ, այսպես ասած, մարտական պատրաստվածության են բերում ուժերը: «Հայաստան» դաշինքում արդեն կոփվել են եւ ձեռնամարտի, եւ լեզվակռվի հարցում, իսկ «ուժեղները», պարզվում է, բառացիորեն՝ ֆիզիկապես են պարապում: Մեզ ասացին, որ ոմանք մարզվում են սպորտդահլիճներում: Ինքը՝ Նարեկ Կարապետյանը, Վովա Վարդանովի հիմնադրած ՈՄԱ-ի սան է եղել եւ մարզումներին է մասնակցել: Ասում են՝ նա նաեւ ինքնակրթությամբ է զբաղվում. ամեն օր քաղաքագիտական գրականություն է ընթերցում, թրեյնինգների մասնակցում եւ այլն:

Սոսկալի անկում

Երբ հետեւում ես կառավարության կամ խորհրդարանի նիստերին, որոնց հետեւել ես առնվազն մի 20-30 տարի, եւ զուգահեռներ ես անցկացնում նախկինում տեսածիդ ու լսածիդ հետ, մեծ ցավ ես ապրում, թե ինչ ահռելի անկում են գրանցել պետական կառավարման մակարդակը, պետական պաշտոնյայի, օրենսդիրում ընտրվածի բառամթերքն ու մտածողությունը: Ինչքան պարզունակ ու ոչ պրոֆեսիոնալ են դարձել քննարկումները, ինչ աղքատիկ են հայ պետական գործչի միտքն ու լուծումներ գտնելու կարողությունը: Իհարկե, մենք առաջ էլ էինք դժգոհ, անցյալում էլ էին հանդիպում անգրագետ, անտեղյակ պաշտոնյաներ, որոնք իրենց ոլորտներից գլուխ չէին հանում, անտարբեր էին պետական հոգսերի հանդեպ, իրենց անձնական խնդիրներով էին, որպես կանոն, զբաղված: Բայց նման ցածրորակ իշխանություն, նման անպատրաստ պետական պաշտոնյաներ, նման անմիտ ու անդեմ մարդիկ երբեք չեն եղել իշխանության մեջ: Եվ ցավալին այն է, որ 2018-ի համեմատ էլ է ահռելի անկում տեղի ունեցել: Այսօրվա նախարարներին առաջ մի հավաբուն չէին վստահի, այսօրվա փոխնախարարները պաշտոնյաների օգնական չէին նշանակվի, այսօրվա օրենսդիրները դպրոցներում պահակ կամ վետերոկ աշխատեցնող կլինեին: Եվ ի՜նչ արագությամբ են փոխվում դեմքերը: Մի պահ հետ նայեք եւ կտեսնեք, թե 8 տարի իշխանությունից կառչած Նիկոլ Փաշինյանն ինչպես է ձեռնոցի նման փոխել իր կաբինետի անդամներին, պետական պաշտոնյաներին, հերթը հասել է թիմակիցներին, որոնց հետ Գյումրիից քայլելով եկել-հասել էր Երեւան: Եվ սա՝ այն պարագայում, երբ կադրերի բանկը դատարկ է՝ նոր մարդիկ չեն հայտնվում ՔՊ-ում՝ Փաշինյանի կողքին: Պարզ է, որ նա շատ կուզենար բոլորին փոխել, նոր մարդիկ նշանակել, որոնք էլ ավելի հավատարմորեն կծառայեին իրեն, բայց այդպիսիք չկան, ուստի ստիպված է բավարարվել եղածով:

Գագիկ Ծառուկյանի «Մուլտի գրուպ» կոնցեռնի մի շարք ընկերությունները կապարակնքելուց առաջ, պարզվում է, ՊԵԿ-ը ստուգումներ է արել այլ ընկերություններում, օրինակ՝ «Առինջ մոլում»: Ընդ որում, ոչ միայն բուն առեւտրի կենտրոնում, այլեւ առանձին վաճառակետերում: Աշխատակիցները մեզ հայտնեցին, որ 2 տասնյակից ավելի վաճառողներ են տուգանվել, յուրաքանչյուրը՝ 600 հազարական դրամով: «Առինջ մոլի» տնօրեն Ալիկ Նազարյանը հաստատեց տեղեկությունը՝ նշելով, որ ՊԵԿ-ը մտել է մոլ, ստուգումներ է իրականացրել, առգրավել է փաստաթղթեր, համակարգիչների ինֆորմացիան՝ կրիչներով: «Գիտեմ, որ ստուգումներ իրականացրել են նաեւ վաճառակետերում ու խոշոր գումարներ են տուգանել, բայց թե ում մոտ կոնկրետ որքան՝ տեղյակ չեմ: Նույն ժամանակահատվածում, երբ եկել են առեւտրի կենտրոնում ստուգումների, այդ ժամանակ էլ տուգանել են վաճառակետերը: Դա տեղի է ունեցել 2-3 շաբաթ առաջ՝ Գագիկ Ծառուկյանի դեմ իրավական գործընթացներից առաջ»: Մեր տվյալներով, «Առինջ մոլն» էլ են պատրաստվում խլել Ծառուկյանից:

96-ՐԴ ՀԱՄԱՐԸ ԿԴԱՌՆԱ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Իշխող թիմում բուռն քննարկումներ են մշտական հանձնաժողովների նախագահների հարցով, չնայած գրեթե բոլորը գիտեն, թե ովքեր են ընտրվելու: Ամենամեծ կոնկուրսը կարծես ԱԺ աշխատանքի եւ սոցիալական հարցերի հանձնաժողովի նախագահի տեղի համար է: Այս պաշտոնի համար առաջադրվել է նաեւ ՔՊ-ական պատգամավոր, հանձնաժողովի նախկին նախագահ Հերիքնազ Տիգրանյանը, որը ՔՊ ցուցակի 96-րդ հորիզոնականում է: 64 պատգամավոր ունեցող ՔՊ-ում մանդատի հերթը կարող է նրան էլ հասնել, եթե 30-35 մարդ գործադիր տեղափոխվի: Բայց պատճառը Փաշինյանի համակրանքն է Տիգրանյանի նկատմամբ. ամեն չորեքշաբթի խորհրդարան այցելող Փաշինյանը մի քանի պատգամավորի հետ է, որպես կանոն, սրճում ԱԺ սրճարանում, որոնց մեջ միշտ կա Տիգրանյանը: Սակայն ի՞նչ իմաստ ունի վարկանիշներ որոշել, ներթիմային ընտրություններ անել, եթե ցուցակի 96-րդ համարը պետք է զբաղեցնի ԱԺ կարեւոր պաշտոններից մեկը: Տիգրանյանը բազում մրցակիցներ ունի. առաջադրվել են Փաշինյանի խոսնակ Նազելի Բաղդասարյանը, նախկին սոցապնախարար Զարուհի Բաթոյանը, խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը եւ կոտայքցի պատգամավոր Լիլիթ Ստեփանյանը:

ԵԹԵ ԳՈՐԾԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆԻՆ, ԱՊԱ ՆՎԵՐ ԾԱՌՈՒԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 3 ՎԱԳՐԵ՞ՐՆ ԻՆՉՈՒ ԵՆ ԲՌՆԱԳՐԱՎԵԼ

*«Հրապարակի» զրուցակիցն է վայրի կենդանիների ներկրմամբ զբաղվող, «Զու ֆաունա արտ» ընկերության հիմնադիր-տնօրեն **Արթուր Խաչատրյանը**, որը նաեւ մասնակցություն է ունեցել Գագիկ Ծառուկյանի կողմից վայրի կենդանիների ձեռքբերման գործընթացին:*



- Տեղեկություններ կան, թե Գագիկ Ծառուկյանն իր առյուծներին անօրինական է ձեռք բերել, որսագողության արդյունքում եւ այլն:

- Ցանկացած կենդանի՝ աշխարհի մասշտաբով, բացի սպիտակ ու սեւ պանդաներից, որոնք Չինաստանի կառավարության սեփականությունն են համարվում, եւ բացի անհետացման վտանգի տակ գտնվող մի քանի տեսակ կենդանիներից ու թռչուններից, ցանկացած մարդ կարող է ունենալ սեփական կենդանիներ: Կարեւոր չէ՝ Կարմիր գրքում է գրանցված, թե՝ ոչ: Աշխարհի մասշտաբով, ցանկացած մարդ, որ կենդանու ձեռքբերման օրինական փաստաթղթեր ունի, կարող է ունենալ այդ կենդանուն ու պահել: Չկա այդպիսի հասկացություն՝ կարմիր գիրք, սեւ գիրք, որ ինչ-որ մեկը չի կարող այդ կենդանուն պահել, ունենալ: Ամենակարեւորը՝ կենդանիները պետք է ձեռք բերվեն համապատասխան օրինական փաստաթղթերով, տեղափոխվեն օրինական ճանապարհով:

- Այսինքն՝ անօրինական ճանապարհներով կենդանու ձեռքբերում, տեղափոխում հնարավոր չէ՞:

- Անհնար է: Հարավաֆրիկյան Հանրապետության օրինակը ես բերեմ. երբ ինչ-որ կենդանատեսակ անօրինական փորձեք դուրս հանել այդ պետությունից, ձեզ կհասնի 30 տարվա բանտարկություն: Պլյուս՝ հնարավոր չէ այնքանով, որ անմիջապես գալիս են բնապահպանական ոստիկանությունը, անասնաբուժական տեսչությունը եւ կենդանիների պաշտպանության պետական կազմակերպություններ ու սկսում են այդ կենդանիներին ստուգել: Ստուգում են չիպերը, փաստաթղթերը, որոնցում գրանցված են կենդանիների առանձնահատկությունները՝ տարիքը, սեռը, արտահանման նպատակը: Այս պրոցեսը շատ խիստ է, ահավոր խիստ է:

- Այսինքն, Ծառուկյանի այգում պահվող կենդանիները չիպավորված են:

- Այո, այդ առյուծները վայրի բնությունից վերցված չեն, նրանք բուծված են անազատ պայմաններում, որի համար ունեն համապատասխան միջազգային սերտիֆիկատ, որը կոչվում է CITES: Այն տրամադրվում է կենդանիներ արտահանող եւ ներմուծող կազմակերպությանը, որը հանդիսանում է միաժամանակ ներմուծման թույլտվություն: Այսինքն, մեր բնապահպանության նախարարությունից, Հայաստանի Հանրապետությունից դուք արդեն պարտադիր չէ, որ ստանաք ներմուծման թույլտվություն, բայց դուք պարտավոր եք ստանալ անասնաբուժական տեսչությունից ներմուծման թույլտվություն:

- Այսինքն, CITES սերտիֆիկատը համարվում է վերպետական փաստաթուղթ եւ նշանակում է, որ կարող եք երկիր ներմուծել կոնկրետ կենդանի:

- Այո, դա միջազգային է, յուրօրինակ գրին քարտ է, որում արտացոլվում է կենդանու սեռը՝ էգ, թե որձ է, միկրոչիպ, մոտավոր տարիք, ինչի համար է տեղափոխվում կենդանին, նպատակը: Այդ ամենը պրն Ծառուկյանի առյուծներն ունեն: Նրանք Հայաստանի Հանրապետություն են ներմուծվել 13.05.2016 թվականին, օրիգինալ փաստաթուղթն իմ ձեռքին է: Այդ ժամանակ առյուծները եղել են մոտավորապես, ենթադրենք, 4-5 ամսական, ոչ ավել:

- Ներմուծումն է միայն վերահսկվում, թե՞ համապատասխան պայմանների ապահովումն էլ:

- Ներմուծող կազմակերպությունը պետք է ունենա համապատասխան պայմաններ: Մեր կազմակերպությունն այդ բոլոր պայմաններն ունի, մենք ենք եղել ներմուծողը, հետո տվել ենք պրն Ծառուկյանին՝ հասկանալով, որ ինքն ունի համապատասխան ու դեռ պահանջվող չափանիշներից շատ ավելի բարձր մակարդակի պայմաններ՝ այդ կենդանիներին պահելու համար: Շրջակա միջավայրի նախարարության կողմից սահմանվող բարձր պահանջներից շատ ավելի լավ պայմաններում է պահել պրն Ծառուկյանը կենդանիներին: Բացի այդ, պարոն Ծառուկյանը դիմել է ՇՄՆ-ին, եւ այդ առյուծները շրջակա միջավայրի նախարարության CITES-ի գրանցամատյանում գրանցված են իր եւ իր որդու անուններով: 3 վագրերը գրանցված են նրա որդու անունով, եթե գործը վերաբերում էր Գագիկ Ծառուկյանին, ապա ինչո՞ւ Նվեր Ծառուկյանին պատկանող երեք վագրերը բռնագրավեցին-տարան: Այսինքն, ՇՄ նախարարությունը շատ լավ տեղյակ է, որ այդ կենդանիներն իրենց մոտ գրանցված են: Այդ գրանցամատյանն իրենք չեն կարող փոխել, դա միջազգային CITES-ի գրանցամատյանն է, բացառված է, որ մեկը ինչ-որ տրյուկներ անի: Գագիկ Ծառուկյանն ու Նվեր Ծառուկյանը դիմել են ՇՄՆ-ին, որպեսզի ստանան պահման թույլտվություն, որին վերաբերող օրենքն ուժի մեջ է մտել 2023 թվականին, 111 օրենքը, որ պարտադիր պետք է գրանցվեն: Պարոն Ծառուկյանի դիմումը ՇՄՆ-ն մերժել է: Մերոնք օրենք էին ընդունել, որով կենդանի ունեցողները պետք է ստանան պահման թույլտվություն: Մերժեցին, թե իբր կոկորդիլոսների թղթերը լիարժեք չէին: Օրինական ձեւով կենդանին ունես՝ միջազգային կարգին համապատասխան, ունես պայմաններ՝ բարձր մակարդակի, բայց միաժամանակ ՀՀ ՇՄՆ-ն պահանջում է պահման թուղթ, ասում են՝ հիմա էլ պահման թուղթ ստացեք: Ինչ է սա, եթե ոչ չինովնիկական բեսպրեդել: Ո՛չ տեսչական մարմինը, ո՛չ ՇՄՆ-ն չեն բարեհաճել գնալ, կատարել ստուգում՝ մինչեւ այս վերջին դեպքերը, ինչն իրենք պարտավորել էին անել, ու թող ուրիշի գրպանն էլ գրանատ չգցեն: Ցույց տվեք 10 տարվա ընթացքում ձեր կողմից արված գոնե մեկ այցի ակտ, որտեղ ֆիքսել եք, որ այցելել եք այդ կենդանիներին, ստուգել եք նրանց պահման պայմանները, այսինքն՝ կատարել եք ձեր պարտականությունը:

- Քննարկումներ ծավալվեցին նաեւ խրտվիլակների շուրջ, թե իբր կենդանիներին սպանել է Ծառուկյանը, որ խրտվիլակ սարքի:

- Շատ վաղուց ես լսել եմ, որ, սկսած այն ժամանակներից, երբ կենդանաբանական այգու ղեկավարը պարոն Աբովյանն էր, ինքը շատ նվերներ է ուղարկել պարոն Ծառուկյանին՝ անկած կենդանիներին խրտվիլակ սարքելու համար: Այսինքն, իրենք չեն կարողացել ինչ-ինչ պատճառներով անկած կենդանու խրտվիլակը սարքել, ուղարկել են պարոն Ծառուկյանին՝ ինքն է սարքել: 20, 30 տարի առաջ կենդանաբանական այգին պարոն Ծառուկյանին ուղարկել է սպիտակ վագրեր եւ անկած կենդանիներ: Բացի այդ, պրն Ծառուկյանը շատ երկար տարիներ է, ինչ կենդանիներ է պահում, իր անկած կենդանիներին էլ է խրտվիլակ սարքել, որպեսզի չշպրտեն, ափսոս է՝ սարքել են: Դրա մեջ վատ բան չեմ տեսնում եւ համոզված եմ, որ Գագիկ Ծառուկյանի պես կենդանասեր մարդու խրտվիլակների հավաքածուի 99 տոկոսն անկած կենդանիների մարմիններից ստացված խրտվիլակներ են:

- Այսինքն, միջազգային պրակտիկայում դա դատապարտելի չէ՞:

- Հասարակ բան է, ամբողջ ՀԱՀ-ը, Միացյալ Նահանգներ մտնես՝ որսն անես, միսը կուտես, խրտվիլակն էլ կանես. դա նորմալ պրակտիկա է, ոչ ոք չի արգելում: Տեխասը, օրինակ, որսի պոլիգոն է՝ բիզոններ, անտիլոպներ, 1960-ականների հայկական մուֆլոն էլ են տարել ԱՄՆ՝ Տեխաս, ու կարող ես գումար վճարել, Տեխասում որսալ հայկական մուֆլոն:

- Այսինքն՝ հատկապես թանկարժեք, հազվագյուտ տեսակներն անկումից հետո են միայն խրտվիլակ սարքում:

- Իհարկե, հո չե՞ն տանելու շպրտեն, բա ափսոս չէ՞, վաղը կարող ես նվիրել ինչ-որ թանգարանի՝ կենդանաբանության, կենսաբանության, համալսարաններին կարող ես նվիրել՝ մասնագիտական ֆակուլտետներին, ինչի՞ շպրտես, հիմարություն է նման բան անելը, հատկապես՝ հազվագյուտ կենդանիների պարագայում:

- Այս իշխանությունների վրա կարո՞ղ են ազդել միջազգային կազմակերպությունները:

- Գիտեք, չակերտավոր փող լվացող էկոպաշտպան կազմակերպություններն աշխարհով մեկ են, ամենաշատ փող աշխատող կազմակերպությունները դրանք են, իբր պաշտպանում են, էս են անում, էն են անում, բայց արանքում ամենաշատ փողը դրանք են փախցնում: Օրինակ, հենց երե՞կ իմացան, որ պարոն Ծառուկյանը կենդանիներ ունի, խրտվիլակներ է պահում, այսինքն, 30 տարի բնապահպանության նախարարությունն ուղտի ականջո՞ւմ էր քնած՝ տեսչության հետ: Բացի այդ, հոկտեմբերին Հայաստանում անցկացվելու է COP 17 միջազգային բնապահպանական հեղինակավոր ֆորումը: Այդ ֆորումից անմիջապես առաջ նման խայտառակ բնապահպանական սկանդալի մեջ հայտնվելը լրջորեն հարվածում է Հայաստանի միջազգային իմիջին, ինչը ցանկալի չէ:

- Կենդանիները դարձել են քաղաքական հետապնդումների զո՞հ:

- Երեւի՝ հա, գիտեք, պետությունը կենդանիներին տեղափոխել է, դա դեռ չի նշանակում, թե անվերադարձ: Հույս ունեմ, որ քննության ավարտից հետո կենդանիներին կվերադարձնեն տիրոջն ու այդ կենդանիներին էլ՝ իրենց տունը դարձած կեցավայր:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ԱՅԼ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԷԼ ԵՆՔ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՆՎԻՐԵԼՈՒ

«Բնակարան՝ 5-րդ բալիկին» մեր նախընտրական խոստումն ի կատար ենք ածում այնտեղ, որտեղ «Ուժեղ Հայաստանը» հաղթել է»,- հայտարարեց Նարեկ Կարապետյանը: Նա այցելել է Ստեփանավան, Գյուլագարակ, Ագարակ, Կուրթան համայնքներ, որտեղ իրենք հաղթել են, եւ հայտարարել, որ ծնված ամեն 5-րդ երեխայի դեպքում ընտանիքին բնակարան են նվիրելու իրենց համայնքում՝ մայրիկի անունով: ՔՊ-ական խմբակին այս քայլը դուր չի եկել, ասում են՝ սա ընտրակաշառք է, թեեւ ընտրություններից 2 ամիս է անցել, իսկ այս 3 համայնքներից միայն մեկում են առաջիկայում ՏԻՄ ընտրություններ լինելու: Հայաստանի քաղաքական կյանքում սա աննախադեպ երեւույթ է, երբ ընտրություններից հետո քաղաքական ուժը, այն էլ՝ չհաղթած, հիշում է իր ընտրողներին եւ խոստումները կյանքի կոչում: Կուսակցության անդամ **Գոհար Ղումաշյանն** ասում է. «Առհասարակ, մեր թիմն աննախադեպ երեւույթ է քաղաքականության մեջ՝ որպես այդպիսին: Մեր թիմի քայլերը, ծրագրերը չկրկնվող են, դրանք ուղղված են բացառապես մեր քաղաքացիների բարեկեցությանը, մեր արածը ո՛չ նախընտրական նվեր է, ո՛չ էլ նախընտրական խոստում, ինչպես տեսնում ենք՝ ծրագրերը կյանքի ենք կոչում ընտրություններից հետո, այլ ոչ թե առաջ: Սամվել Կարապետյանի բարձր հեղինակությունը հենց այնպես չէ, նրա բոլոր խոստումները, կլինի ընտրություններից հետո՝ նախքան քաղաքական պրոցեսներ սկսելը, թե բարեգործություններ կատարելը, իրականացվում են պարտադիր: Թե՛ այս խոստումները, թե՛ մնացյալ 5 տնտեսական քայլերը, որոնց մասին բազմիցս խոսել ենք նախընտրական փուլում, անպայման իրականացնելու ենք: Դեմոգրաֆիային ուղղված մեր խոստումները պարտադիր իրականացվելու են, ուղղակի քանի որ մենք այս պահին չունենք իշխանություն, եւ մեր լծակները սահմանափակ են, սկզբնական փուլում իրականացնելու ենք այն ծրագրերը, որոնք մեր կարգավիճակը մեզ թույլ է տալիս: Որպեսզի շնորհակալություն հայտնենք մեզ ընտրող քաղաքացիներին, որոշեցինք սկզբնական փուլում բնակարաններ նվիրել այն համայնքներում ապրող՝ 5 երեխա ունեցող ընտանիքներին, որտեղ հավաքել ենք ամենաշատ ձայները: Սկսում ենք Ստեփանավանից, Տաշիրից, Գյուլագարակից, կան այլ համայնքներ եւս, սակայն այս փուլում դրա մասին վաղ է խոսելը: Այլ համայնքներում էլ ենք բնակարաններ նվիրելու: Ստատիստիկ տվյալները ճշգրտման փուլում են՝ 10 օր ենք հատկացրել հավաքագրմանը: Մարզեր կատարած այցերը նույնպես կարեւոր են՝ մեր ընտրողների հետ շփվելու, նրանց լսելու համար»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՐՈՊԵՌԱԿԱՆ

«ՀՐԱՊԱՐԱԿԸ» ճիշտ էր, ԱՆԻՖ-Ը՝ սխալ. կոռուպցիայի եվ անպատժելիության մի դասական պատմություն

«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» (ԱՆԻՖ) ՓԲԸ-ն, ինչպես հայտնի է, աչքի էր ընկնում իր մեծ ախորժակով, սակայն չէր հանդուրժում քննադատություն: Տարիներ շարունակ այն դատական հայցեր էր ներկայացնում իրեն քննադատողների դեմ, մինչեւ որ վերջնական ֆիասկո ապրեց՝ պարզվեց, մենք ճիշտ էինք, մեզ զրպարտության ու վարկաբեկման մեջ մեղադրողները՝ սխալ:

2024 թ. մարտի 14-ին կառավարությունը որոշեց լուծարել 2019-ին ստեղծված այս կառույցը, որով ժամանակին պարծենում էին՝ ներկայացնելով որպես Հայաստանում ներդրումային գործընթացի լոկոմոտիվ, որին բյուջեից ահռելի փողեր էին տալիս: ԱՆԻՖ-ը պետությունից, ընդհանուր առմամբ, ստացել է շուրջ 25 միլիարդ դրամ (մոտ 60-64 միլիոն ԱՄՆ դոլար): Միայն 2023-ի դեկտեմբերի 28-ին ԱՆԻՖ-ին 1 միլիարդ 800 միլիոն դրամ պետական դրամաշնորհ տրամադրեցին, մի այդքան էլ վարչապետի աշխատակազմի կողմից տրվել էր 2022 թվականի մայիսի 3-ին, որով ԱՆԻՖ-ը պետք է իրականացներ ազգային ավիափոխադրող «Ֆլայ Արնա» ընկերության գործունեության մեկնարկը՝ ընկերության, որը հետագայում սնանկ ճանաչվեց: Չէր հրապարակվում, թե ինչ պայմաններով է ազգային փոխադրողը համագործակցելու պետության հետ: Բյուջեն փող էր տալիս ֆոնդին, ֆոնդը ներդրում էր անում: Այս մասին «Հրապարակը» 5 տարի առաջ հոդված էր գրել, մեկ ուրիշ հրապարակմամբ էլ անդրադարձել էինք պետական այս հիմնադրամի ոչ թափանցիկ աշխատաոճին, աստղաբաշխական աշխատավարձերին, որոնց չափերը հանրությանը հայտնի չէին, ԱՆԻՖ-ի եւ նրա աշխատողների ՕԳԳ-ին, որը զրո էր: Անդրադարձել էինք բավականին զուսպ ու զգուշորեն՝ զրուցելով հնարավոր շահառուների հետ եւ փորձելով մեկնաբանություն ստանալ բուն հիմնադրամից:

Առանց մեզ պատասխանելու, ԱՆԻՖ-ը մտել էր դատարան եւ 1 տարում 3 հայց էր ներկայացրել «Հրապարակի» ու իմ՝ այդ հոդվածների հեղինակի դեմ, մեզ մեղադրել զրպարտության եւ իրենց գործարար համբավին վնաս պատճառելու մեջ, դատարանից պահանջել՝ մեզ պարտավորեցնել՝ վճարել, ընդհանուր հաշվով, 3 միլիոն դրամ, նաեւ հանդես էր եկել հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությամբ, որպեսզի կալանք դրվի մեր հաշիվների վրա, եւ մեր գործունեությունը կասեցվի: Այլ կերպ ասած՝ պետական ֆոնդը, որը հաշվետու է հասարակության եւ անկախ լրատվամիջոցի առաջ, որը պարտավոր էր մեր երկրում ներդրումներ ապահովել, սակայն չէր կարողացել իրականացնել իր առաքելությունը, հանրային միջոցներից ահռելի գումարներ էր մսխել, որի համար հետագայում սկանդալով փակվեց, թույլ չէր տալիս լրատվամիջոցներին՝ անդրադառնալ իր գործունեությանը, բացահայտել այն վնասները, որը տարեցտարի պատճառում էր բյուջեին: Ավելին՝ փորձում էր փակել մեր բերանը եւ 3 մլն դրամ էր պահանջում «Հրապարակից»՝ միայն այն բանի համար, որ հանդգնել էինք կասկածել ֆոնդի ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությանը, բացահայտել չարաշահումները: Եվ եթե հետագայում ծագած սկանդալն ու հիմնադրամի լուծարումը չլինեին, գուցե նաեւ դատարանում մենք պարտվեինք եւ այդ գումարը վճարեինք կոռուպցիայով զբաղվող այդ մարդկանց:

ԱՆԻՖ-ի թիրախում միայն «Հրապարակը» չէր, այլ նաեւ՝ ԱՆԻՖ-ի թեմայով մեզ հարցազրույց տված Հրանտ Բագրատյանը, որը հայտարարել էր, որ ԱՆԻՖ-ը պետական միջոցները փոշիացնող, կոռուպցիոն ռիսկեր ստեղծող հիմնարկ է: ԱՆԻՖ-ը եւ դրա նախկին տնօրեն Դավիթ Փափազյանը դիմել էին դատարան նաեւ ՀՀ նախկին վարչապետի դեմ՝ պահանջելով հերքել այդ խոսքերը եւ իրենց վճարել խոշոր դրամական փոխհատուցում՝ «զրպարտության համար»: Դատական գործերը տեւեցին մոտ 5 տարի: Այդ ընթացքում ֆոնդի 2 հայտնի պրոյեկտն էլ՝ ավիափոխադրողի եւ «Այգ» ֆոտոկայանի ստեղծումը, տապալվեցին:

Արդեն 2 տարի է, ինչ այս խայտառակված կառույցը լուծարման փուլում է, եւ դատարաններին ոչինչ չի մնում անել, քան մերժել ԱՆԻՖ-ի «գործարար համբավին, պատվին ու արժանապատվությանը» վերաբերող դատական հայցերը կամ թողնել առանց քննության: «Հրապարակի» եւ իմ դեմ 3 հայց էր ներկայացվել: Հայցերից 2-ում մենք հաղթել ենք, իսկ վերջինով օրերս ծանուցում ստացանք, որ Երեւանի քաղաքացիական դատարանը որոշել է ԱՆԻՖ-ի հայցը թողնել առանց քննության, քանի որ դրա ներկայացուցիչները չեն ներկայացել նիստի: Մյուս հայցերով, որոնք վերաբերում էին ֆոնդի ձախողումներին, բարձր աշխատավարձերին, «Ֆլայ Արնայի» ստեղծման կոռուպցիոն ռիսկերին, նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանի հարցազրույցին, մենք հաղթել ենք: Պաշտպանությունն իրականացրել են «Լեւ գրուպ» գրասենյակը եւ փաստաբան Լեւոն Բաղդասարյանը, որի համար նրան շնորհակալ ենք:

Առաջին ատյանի քաղաքացիական դատարանը մերժել է նաեւ Հրանտ Բագրատյանի դեմ հայցը՝ արձանագրելով, որ նախկին վարչապետի հնչեցրած մտքերը՝ հանրային միջոցների վատնման մասին, հիմնավորված քննադատություն են, ոչ թե վիրավորանք կամ զրպարտություն: Փաստորեն, եւ մենք, եւ ՀՀ նախկին վարչապետը մի բան էլ քիչ էինք գրում, որովհետեւ պետական փողերը լափում էին ու մեզ դատի տալիս: Այսօր կարող ենք փաստել, որ ԱՆԻՖ-ը նոր հայկական կոռուպցիայի խորհրդանիշն է, Փաշինյանի իշխանության օրոք ստեղծված ամենամեծ կոռուպցիոն հիմնարկը, որը բացահայտվեց, բայց այն մարսեցին, ու ոչ ոք չպատժվեց: ՊԿԾ-ի, Հաշվեքննիչ պալատի ստուգումները ցույց են տվել, որ ֆոնդը տարիներ շարունակ աշխատել է հսկայական վնասներով, պետությունից ստացած միջոցները փոշիացվել են, ղեկավար կազմը ստացել է չհիմնավորված բարձր աշխատավարձեր, պարգեւավճարներ: Հակակոռուպցիոն կոմիտեում հարուցվեցին վարույթներ ԱՆԻՖ-ի պաշտոնատար անձանց կողմից լիազորությունների չարաշահման, պաշտոնեական կեղծիքների եւ առանձնապես խոշոր չափերի հափշտակությունների փաստերով: Ֆոնդի գործադիր տնօրեն Դավիթ Փափազյանի նկատմամբ հայտարարվեց հետախուզում: Եվ ի՞նչ: ԱՆԻՖ-ի ապօրինի գործունեության համար ոչ ոք այդպես էլ չպատժվեց, դատարան է ուղարկվել դուստր ընկերության երկրորդական մի պաշտոնյայի գործ, իսկ ֆոնդի խորհրդի նախագահ Տիգրան Ավինյանը բարեհաջող շարունակում է զբաղեցնել քաղաքապետի պաշտոնը:

Ստացվում է պարադոքսալ իրավիճակ. պետական բյուջեից, ըստ էության, միլիարդավոր դրամներ վատնելու, կոնկրետ նախագծերով «ուտելու» փաստը իշխանությունը հանգիստ է տանում, բայց Ծառուկյանի թեմայով ջղաձգվում է եւ ինչ-որ անհասկանալի «չվճարված հարկեր» է փորձում պեղել, անգամ չգտնելով՝ «նստացնում» ու «կզացնում» է, պաշտպանելով իրանցի ինչ-որ կասկածելի շանտաժիստների: Կամ դատում է, ասենք, մի խեղճուկրակ համայնքապետի, որն իր ազգականին հավաքարար է նշանակել ու 1 միլիոն դրամ դուրս գրել նրա անունով կամ՝ բարեկամին դռնապահ է նշանակել, կամ հավաքարարին իր տանն է աշխատեցրել եւ այլն, եւ այլն: Իսկ խոշոր գործերը, ԱՆԻՖ-ի օրինակով, ջրվում են:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՎԵՀԱՓԱՌԸ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՄԵԿՆԱՐԿԻՆ

Ո՞ր գումարման խորհրդարանի անդրանիկ նիստի ինտրիգներից մեկն էլ այն է լինելու, թե արդյո՞ք Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը կհրավիրվի առաջին նիստին եւ իր հայրապետական օրհնանքը կհղի ազգընտիրներին, ինչպես եղել է նախորդ գումարումների խորհրդարաններում: «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 33 հոդվածի համաձայն՝ «առաջին նստաշրջանի բացման առթիվ ողջույնի ելույթի իրավունք ունեն Հանրապետության նախագահն ու Ամենայն Հայոց Կաթողիկոսը»:

Մայր Աթոռի մեր աղբյուրներից տեղեկացանք, որ մինչ այս պահը հրավեր չեն ստացել: Պարզ է, որ չեն էլ ստանալու: Կարկառուն ՔՊ-ականներից մեկը կատակեց, թե՝ ուզում է, թող ինքնակամ գա եւ օրհնի նիստը: Մեզ չհաջողվեց պաշտոնական մեկնաբանություն ստանալ՝ պատրաստվո՞ւմ է արդյոք Վեհափառն ինքնակամ այցելել խորհրդարան եւ հայրապետական օրհնանք հղել պատգամավորներին, որոնց մեծ մասը նրան հայհոյել ու վիրավորել է եւ նրա օրհնանքի կարիքը չի զգում: Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Տեր Եսայի քահանա Արթենյանը չպատասխանեց մեր զանգերին:

Իսկ իշխանական թիմում չեն պատրաստվում հատուկ հրավեր ուղարկել Վեհափառին եւ դա փորձելու են բխեցնել օրենքից, որ կաթողիկոսի ներկայությունը ոչ թե կանոնակարգի իմպերատիվ պահանջն է, այլ գրված է՝ «իրավունք ունի ելույթ ունենալ»:

Հիշեցնենք, որ շուրջ մեկ տարի է՝ Նիկոլ Փաշինյանը Եկեղեցու դեմ պատերազմ է հայտարարել, նա ու իր նեղ խմբակը Գարեգին Բ-ին կաթողիկոս չեն համարում եւ անգամ ՔՊ նախընտրական ծրագրում հոգեւոր առաջնորդին գահընկեց անելու ծավալուն սխեմա են ներառել, որը կյանքի կկոչեն հարմար պահին:

Գարեգին Երկրորդ կաթողիկոսը 2003 թվականից մասնակցել է ԱԺ բոլոր գումարումների անդրանիկ նիստերին:

Հիշեցնենք նաեւ՝ առաջին նստաշրջանի նիստերը բացում եւ մինչեւ Ազգային ժողովի նախագահի ընտրվելը նախագահում է տարիքով ավագ պատգամավորը, որն արդեն չորրորդ անգամ կիրակացնցի ազգությամբ քուրդ Կնյազ Հասանովը: 80-ն անց Հասանովն ազգային փոքրամասնության ցուցակով խորհրդարանում է դեռեւս Սերժ Սարգսյանի իշխանության տարիներից:

Ողջույնի ելույթներից հետո պատգամավորները երդվում են. ի դեպ, «ԱԺ կանոնակարգ» օրենքում դեռ երդման նախկին տեքստն է դրված, մինչդեռ շաբաթներ առաջ ՔՊ-ականները երդման տեքստն էլ փոխեցին՝ հարմարեցնելով իրենց վարած ապազգային քաղաքականությանը: Պատգամավորների երդումից հետո նիստը նախագահողը հայտարարում է առաջին նստաշրջանի օրակարգը, այն է՝ հաշվիչ հանձնախմբի ստեղծում. ԱԺ նախագահի, նախագահի երեք տեղակալների ընտրություններ, մշտական հանձնաժողովների ստեղծում, մշտական հանձնաժողովների նախագահների ընտրություններ:

Մինչեւ մշտական հանձնաժողովների նախագահների ընտրությունների հարցի քննարկումն ավարտելը, տեղի են ունենում ամենօրյա նիստեր, ապա ձեւավորվում են մշտական հանձնաժողովները, ինչպես նաեւ՝ ԱԺ խորհուրդը: Առաջին նստաշրջանն ավարտվում է Ազգային ժողովի նախագահի եզրափակիչ ելույթով եւ հերթական նստաշրջանի գումարման օրվա մասին հայտարարությամբ: Նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստից հետո գործող կառավարության լիազորությունները դադարում են, եւ այն շարունակում է աշխատել որպես ժամանակավոր կառավարություն՝ մինչեւ նոր կառավարության ձեւավորումը: Եթե որեւէ կուսակցություն կամ կոալիցիա ունի խորհրդարանական մեծամասնություն, ապա հանրապետության նախագահը վարչապետ է նշանակում այդ մեծամասնության ներկայացրած թեկնածուին:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՖՈՒՏԼՅԱՐ

ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ԿԱՐԵԼԻ Է ԴԱՏԻ ՏԱԼ ՈՉ ՄԻԱՅՆ ԶՐՊԱՐՏՈՒԹՅԱՆ, ԱՅԼԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



Նիկոլ Փաշինյանն առավոտից երեկո այնքան է դատարկախոսում, խորհրդարանական ընտրարշավի ընթացքում էլ այնքան հոգեխախտ տեսարաններ ցուցադրեց, աջուձախ անծանոթ քաղաքացիների հետ լեզվակռիվների մեջ մտնելով, մարդկանց վրա հարձակվել-քաշքշելով, ում հասցեին ասես հայհոյանք ու վիրավորանք շաղ տալով եւ տեսախցիկների առաջ հիստերիկանալով ու բղավելով, թե ինչու «արցախցիները չեն զոհվել, ինչու են ողջ մնացել», որ դժվար նման ակնհայտ հոգեկան խանգարման նշաններ ունեցողին լսողներ գտնվեն: Ծաղրողներ, հայհոյողներ, անիծողներ՝ որքան ասես, բայց լսողներ՝ ոչ: Սակայն մեկ-մեկ դարակազմիկ մտքեր Փաշինյանն ասում է:

ԶՐՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՑԵՐ

Ասենք, ինչ ասես արժեր այն խելապակաս հայտարարությունը, թե ընդդիմության օգտին քվեարկած քաղաքացիները դա արել են բացառապես ընտրակաշառք վերցնելով: Արդեն իսկ քաղաքացիները նման զրպարտության համար Փաշինյանին դատի տվել են եւ շատ էլ ճիշտ են վարվել: Բայց այդ աշխատանքը պետք է կազմակերպել եւ տասնյակ հազարավոր քաղաքացիների կողմից հայցեր ներկայացնել, թեկուզ տիպային հայցադիմումներով, որպեսզի քաղաքացիներին մնա անձնական տվյալներ լրացնելու, ստորագրելու գործը: Ընդդիմությունն ինչո՞վ է զբաղված, որ այդ կարեւոր գործը չի կազմակերպում:

Ինչ խոսք, անգամ կույրին է տեսանելի, որ Փաշինյանը եւ իր վարչախումբը հունիսի 7-ի ընտրություններին ընդառաջ՝ համատարած, հարյուր հազարավոր մարդկանց նյութական եւ ոչ նյութական ընտրակաշառք են բաժանել՝ 10 հազար դրամ կենսաթոշակային հավելումների, առողջապահական ապահովագրության, ժամկետային զինծառայության կրճատման, վարորդների համար նպաստավոր կարգավորումների, տարբեր սոցիալական խմբերի հասցեագրված այլ ձեռնարկումների տեսքով, դրանք ներկայացնելով որպես կառավարության ծրագրեր, որոնք, չգիտես ինչու, կյանքի չէին կոչվում նախընթաց հինգ տարիներին, սակայն ընտրությունների նախաշեմին գործադրվեցին հինգ ամսից էլ կարճ ժամկետում: Այդ համատարած ընտրակաշառքն է պատճառը, որ Փաշինյանը, իրավապահ համակարգը սեւ քարոզչության գործիք դարձրած, օրնիբուն զազրախոսում է իբր ընդդիմության համակիրների կամ կուսակցականների կողմից ընտրակաշառք բաժանելու բացահայտումների մասին... Քանի հազար տարի առաջ է ասվել. «Գողն ամենից բարձրն է բղավում՝ բռնեցեք գողին»: Ենթագիտակցորեն սեփական հանցագործություններն այլոց վերագրելը վաղուց հայտնի երեւույթ է, Փաշինյանի հիստերիան էլ՝ հերթական դրսեւորումը:

Սակայն բոլոր այս հանգամանքները ոչինչ չեն փոխում: Ինչու, ինչ շարժառիթով է Նիկոլ Փաշինյանը հրապարակավ զրպարտել ՀՀ բոլոր քաղաքացիներին, որոնք հունիսի 7-ի ընտրություններում իրենց քվեն տվել են ընդդիմությանը, էական չէ: Էականը փաստն է, որ Փաշինյանը բառացի ասել է. ««Քաղաքացիական պայմանագիրը» ստացել է 100 տոկոսով օրգանիկ քվե, էն մյուս ուժերը ստացել են 100 տոկոսով ընտրակաշառքով քվե», մի քանի օր անց էլ ճամարտակել է. «Ես պաշտոնապես ասում եմ՝ աչքաչափով էլ երեւում է, որ էդ եռագլուխ կուսակցությունների ստացած ձայների 70 տոկոսը փողով ստացած ձայներ են»: Ավելի վայրագ զրպարտություն՝ իր ընտրական իրավունքն իրացրած եւ ուսապարկեր-ՔՊ-Փաշինյան եռագլուխ գոյացությանը մերժած ՀՀ կես միլիոնից ավելի քաղաքացիների հասցեին, չի լինում: Հետեւաբար, կես միլիոն քաղաքացիներն էլ իրավունք ունեն դիմել դատարան եւ յուրաքանչյուրը մինչեւ երեք միլիոն դրամ փոխհատուցում պահանջել Փաշինյանից՝ հրապարակային զրպարտության համար:

Ճիշտ է, որ այդ իրավաքաղաքական արշավը կազմակերպվի ընդդիմադիր կուսակցությունների կողմից, որոնք առնչվում են երկրի առաջին՝ օրենսդիր իշխանությանը: Եթե կուսակցությունները դա չեն անում, ապա պետք է անեն իրավաբանները, փաստաբանները, որոնք առնչվում են երրորդ՝ դատական իշխանությանը: Եթե իրենք էլ չեն ձեռնարկում, ուրեմն չորրորդ իշխանությունը՝ մամուլը պետք է արշավը կազմակերպի: Ի վերջո որեւէ, հանրային խավ դա պետք է անի: Իսկապես արժե, որ Փաշինյանին մի քանի հարյուր հազար, թեկուզ մի քանի տասնյակ հազար մարդ դատի տա զրպարտության համար, որեւէ փոխհատուցում դեռ մի կողմ թողած:

ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՑԵՐ

ՀՀ կես միլիոնից ավելի քաղաքացիներին զրպարտելու համար Փաշինյանի դեմ դատական հայցեր ներկայացնելուց բացի, արժե մտածել Փաշինյանին նաեւ անգործության համար դատի տալու մասին: ՀՀ վարչապետն ի պաշտոնե կոչված է արտերկրում ներկայացնելու Հայաստանի Հանրապետությունը եւ պաշտպանելու ՀՀ շահերը: Մինչդեռ այսօր նշյալ պաշտոնը զբաղեցնող հացկատակը բացարձակ անգործություն է դրսեւորում, երբ արտերկրից ստում եւ զրպարտում են Հայաստանին եւ հայությանը: Վերջին մի քանի օրում միայն երեք ամպագոռգոռ հայտարարություն իմ ուշադրությունը գրավեց:

Առաջինը՝ Թուրքիայի նախագահ Էրդողանի բարբաջանքը՝ Իսրայելի կառավարության կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելուց հետո: Ինչպես արդեն առիթ ունեցել ենք գրելու, Մերձավոր Արեւելքում ծավալվող իրադարձություններից Փաշինյանի ուղեղն այնպես է «կախել», որ, հակառակ ամեն ինչի մասին ճամարտակելու բնազդին, Իսրայելի կառավարության կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելուց հետո ձայն չի հանում: Փոխարենը լեզվին տվեց Էրդողանը եւ ինչ ստեր ասես՝ շաղ չտվեց. Էլ իր հազիվ 5-6 հարյուր տարվա պատմություն ունեցող երկրին 1000-ամյա պատմություն վերագրել, Էլ հետամնացության, բարբարոսության ու ավերածությունների խորհրդանիշ, մարդկային զարգացումն արգելակած Օսմանյան կայսրության անցյալը «փառապանծ» կոչել, Էլ Հայկական բարձրավանդակի, հնդեվրոպական քաղաքակրթության օրրան հանդիսացած Մեծ Հայքի, Փոքր Հայքի, Ծոփքի, Կիլիկիայի, այդտեղ Ք.ծ.ա. 2592 թ.-ից մինչեւ Ք.ծ.հ. 2020 թ. ապրած եւ արարած, Հայկազունիների, Արարատյան, Արտաշիսյանների աշխարհակալությունները, Երվանդունիների, Արշակունիների, Բագրատունյաց, Կիլիկիայի թագավորությունները կերտած հայ ժողովրդի պատմությունը կեղծել ու աղավաղել: Վերջում էլ մարդկային պատմության մեծագույն ոճիրներից մեկը՝ Հայոց ցեղասպանությունը ժխտել, դրա դատապարտման դեմ վայրահաչել կամ Գազայի դեպքերի հետ զուգահեռ տանել, երբ Գազայի դեպքերը, այո, սարսափելի ու խորագույնս դատապարտելի, բայց լոկ պատերազմական հանցագործություններ են, որ ո՛չ մասշտաբով, ո՛չ հետեւանքներով աղերս չունեն 1915-23թթ. հայոց կամ 1939-45թթ. հրեից ցեղասպանությունների հետ: Ով էլ այս երկրագնդի վրա «ցեղասպանություն» բառը հոլովի, գոնե կիսագրագետ Էրդողանը պետք է լռի: Սակայն այստեղ հարցն Էրդողանի՝ գրոշի արժեք չունեցող դատարկախոսությունները չեն, ոչ էլ ցեղասպանությունը, այլ հայոց 5-հազարամյա պատմության եւ հայրենիքի հանդեպ ոտնձգությունն ու կեղծարարությունը, որին Փաշինյան կոչված թյուրիմացությունը 1 բառով անգամ չի հակադարձում: Մնում է հարցը, թե նման սրիկայական վարք դրսեւորողն ինչու է հայոց պետության մեջ պաշտոն զբաղեցնում, այն էլ՝ վարչապետի:

Հաջորդը՝ Իլհամ Ալիեւի վայրահաչոցը Միջազգային քրեական դատարանի առաջին նախագահ Լուիս Օկամպոյի, ԵՄ նախկին բարձր հանձնակատար Ժոզեպ Բորելի եւ Հայաստանի Հանրապետության հասցեին, թե Հայաստանը նրանց ուղղակի կամ միջնորդավորված կաշառել էր՝ հայանպաստ դիրքորոշումներ որդեգրելու համար: Նախ, երբ խոսքը գնում է հայ-ադրբեջանական դիմակայության մասին, որտեղ երկու հակոտնյա կողմեր են՝ մի կողմում 5-6-հազարամյա պատմությամբ հնդեվրոպական քաղաքակրթության, Բարեբեր մահիկի (Fertile Cresent) եւ քրիստոնեության ակունքներում կանգնած հայ ժողովուրդը, մյուս կողմում՝ 3-4 հարյուր տարի առաջ Հարավային Կովկաս ներթափանցած թաթարական բաշիբոզուկներ, որ առնչություն չունեն մարդկային քաղաքակրթության հետ, ցանկացած քաղաքակիրթ անհատ էլ հայերին կհամակրի: Հակառակը հնարավոր է միայն կաշառքի ներգործությամբ, ինչը տարիներ շարունակ բաժանել է Ադրբեջանի նախագահ Ալիեւը՝ պարբերաբար մերկացվելով միջազգային մամուլում եւ հայտնվելով սկանդալների մեջ: Ու այդ կաշառակերության, կաշառատվության, փողերի լվացման մեջ թաղված միջազգային հանցագործը, որը նաեւ արցախահայության դեմ գործած էթնիկ զտման համար մարդկության դեմ հանցագործ է եւ Հաագայի դատարանի առջեւ կանգնելու ենթակա մեկը, լկտիանում է այնքան, որ Հայաստանին ուղիղ կամ միջնորդավորված կաշառատվության մե՞ջ է մեղադրում: ՀՀ վարչապետի պաշտոնը զբաղեցնող թյուրիմացությունն էլ լռում է:

Երրորդը. Կրեմլի խոսափող Մարիա Զախարովան էլ իր հերթին էր օրերս լեզուն երկարացրել եւ Հայոց ցեղասպանությունից էր խոսում՝ երեւի մոռանալով որ 1920-ին Քեմալ Աթաթուրքին գտած, զինած, ֆինանսավորած եւ Հայաստանի ու Հունաստանի դեմ քսի տված երկիրը եղել է Ռուսաստանը, Սեւրի դաշնագրի գործադրումը Հայաստանի ու Հունաստանի մասով վիժեցրած եւ Արեւմտյան Հայաստանի կորստյանը նպաստած, «Ռուս-թուրքական եղբայրության եւ բարեկամության» պայմանագիրը կնքողը՝ ի հաշիվ հայոց հողերի, եղել է Ռուսաստանը, որ այդ նողկալի պայմանագրի 100-ամյակը տոնողը 2021-ին, Արցախի 44-օրյա պատերազմից հետո եղել է Ռուսաստանը: Որ կարելի է Ռուսաստանը թուրքերին ու քրդերին համահավասար մեղսագործ ու հանցակից ճանաչել նաեւ հայերի ցեղասպանության հարցում: Չլինեին ռուսները, հայերը կվերադառնային Սեւրյան Հայաստան, ինչպես 1604-ի Շահ Աբասի կազմակերպած վայրագ տեղահանությունից ու կոտորածից հետո վերջնահաշվում հայերը վերադարձան հայրենիք, եւ այսօր այդ սարսափելի դեպքերի հետքն էլ չկա ազգային հիշողության մեջ: Անգամ Իրանը բարեկամ համարող հայեր գոյություն ունեն, քանի որ Իրանի արնախում Շահ Աբաս արքայի եւ հայության դեմ գործած նրա ոճիրների թույլ արձագանքը միայն գեղարվեստական գրականության մեջ է մնացել, օրինակ՝ Հովհ. Թումանյանի «Թմկաբերդի առումի»: Հետեւաբար, չլինեին ռուսները, հայերը կվերադառնային Սեւրյան Հայաստան, տեղի չէր ունենա հայրենազրկման իրողություն, 1915-ի տեղահանությունն ու կոտորածն էլ չէին դառնա ազգային տրավմա եւ ցեղասպանություն:

Ռուսներն այնքան մեղսագործ ու հանցագործ են աստծո, քաղաքակրթության, քրիստոնեության ու մարդկության առաջ այն ամենի համար, ինչ կատարվել է 20-րդ դարասկզբին Սեւրի դաշնագրի, հայերի եւ հույների հետ, որ բարոյական իրավունք չունեն ձայն հանելու: Իսկ եթե խոսում են, ուրեմն Հայաստանում պետք է լինի վարչապետ, որ պատասխանի այնպես, որ մյուս անգամ լռեն: Իսկ եթե վարչապետի աթոռն անիմաստ զբաղեցնողը չի պատասխանում Հայաստանի հասցեին հնչող զրպարտություններին ու կեղծիքներին, նման անգործության համար ճիշտ է նրան արդարադատության առջեւ կանգնեցնելը:

Լուսինե
ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

ԱԷԿ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՃԳՆԱԺԱՄ Է. ՓԱՇԻՆՅԱՆԸ ԳՏԵԼ Է ԼՈՒԾՈՒՄԸ

Հայաստանում էներգետիկ ճգնաժամ է. օրը մի քանի անգամ տեղի ունեցող հոսանքազրկումներից բացի, հատկապես երեկոյան ժամերին չեն աշխատում օդորակիչները, սառնարանները, մարդիկ չեն կարողանում լիցքավորել էլեկտրամոբիլները, լուսավորման սարքերը թույլ են լուսավորում, էլեկտրաէներգիա կա, բաց ցանցում լարումը թույլ է, ինչը կապված է էլեկտրաէներգիայի պակասի հետ: Պատճառը հայկական ատոմակայանի չաշխատելն է. կայանը գտնվում է հերթական վերանորոգման փուլում: Նիկոլ Փաշինյանը հաճախ է հայտարարում, որ վերջին մի քանի տարիներին հայկական ատոմակայանի հզորությանը համարժեք երկու կամ չորս կայան է կառուցվել՝ նկատի ունենալով արեւային էլեկտրակայանները, բայց, չնայած նման ամպագոռգոռ հայտարարություններին, երբ ՀԱԷԿ-ը կանգնում է, դադարում է էլեկտրաէներգիա արտադրել, Հայաստանում էներգետիկ ճգնաժամ է առաջանում, որն իրենց վրա զգում են երկրի գրեթե բոլոր բնակիչները, բացառությամբ, թերեւս, Երեւանի փոքր կենտրոնի:

Հայաստանին օդուջրի նման անհրաժեշտ է նոր ատոմային էլեկտրակայան, բայց Փաշինյանը չի կարող նոր կայան կառուցել, նախ՝ որովհետեւ փող չկա, եւ ամենակարեւորը՝ Թուրքիան եւ Ադրբեջանը դեմ են նոր ատոմակայան կառուցելուն, դեմ են Հայաստանի էներգետիկ անկախությանը, իսկ Փաշինյանը չի կարող առանց նրանց թույլտվության շարժվել: Ատոմակայան ունենալը, ատոմային էներգիա արտադրելը մի այնպիսի առավելություն է, որը ոչ բոլորին է տրված, աշխարհի ոչ բոլոր երկրները կարող են հպարտանալ, որ ատոմային գեներացիա ունեն, Հայաստանն այդ քիչ երկրների թվում է, բայց դա մեր պապերի եւ հայրերի գործունեության շնորհքն է, որը մենք կորցնում ենք:

Մի քանի օր առաջ համաշխարհային լրատվամիջոցները տեղեկություն տարածեցին, որ Սլովակիայում տեղի է ունեցել Մոխովցեի ատոմակայանի չորրորդ էներգաբլոկի վառելիքի բեռնման պաշտոնական արարողությունը, եւ էներգաբլոկն առաջիկա օրերի ընթացքում կսկսի էներգիա արտադրել: Այս էներգաբլոկի շինարարությունը տեւել է 39 տարի, այն սկսվել էր դեռեւս 1987 թվականին, երբ դեռ կար Խորհրդային Միությունը, եւ Սլովակիան էլ առանձին պետություն չէր, այլ՝ Չեխոսլովակիա անունով պետության մաս, որը ԽՍՀՄ-ի ստեղծած տնտեսական համագործակցության խորհրդի անդամ էր: Երկար տարիներ այդ էներգաբլոկի շինարարությունը կոնսերվացված էր, էկոլոգիական եւ անվտանգության նկատառումներով՝ ԵՄ-ն թույլ չէր տալիս, որ կայանի շինարարությունն ավարտին հասցվի եւ շահագործվի, բայց երկրի իշխանություններն ի վերջո կարողացան պնդել, որ դա անհրաժեշտ է իրենց երկրին, եւ ավարտին հասցրին կիսատ թողնված գործը:

Սլովակիան Հայաստանի նման երկիր է. չունի ելք դեպի ծով, չունի հանածո էներգետիկ ռեսուրսներ, Հայաստանից տարածքով եւ բնակչության թվով գրեթե մեկուկես անգամ է մեծ, ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի անդամ է: Կառուցված ատոմային էներգաբլոկի ռեակտորն էլ Հայաստանում աշխատող VVER-440 ռեակտորի նմանակն է՝ խորհրդային նախագծմամբ եւ արտադրության: Միայն, ի տարբերություն Հայաստանի, Սոլովակիան ունի արժանապատիվ եւ երկրի շահերով առաջնորդվող իշխանություն, որը ոչ միայն չի խուսափում Ռուսաստանի հետ համագործակցությունից, այլեւ «Ռոսատոմի» դուստր ձեռնարկության հետ կնքել է մինչեւ 2031 թվականը վառելիքի մատակարարման պայմանագիր, Ռուսաստանը աշխարհում ատոմային վառելիքի շուկայում 40 տոկոս մասնաբաժին ունի: Սլովակիայի վարչապետ Ռոբերտ Ֆիցոն էլ վառելիքի բեռնման պաշտոնական արարողության ժամանակ հպարտությամբ հայտարարել է, որ նոր էներգաբլոկի աշխատանքի շնորհիվ Սլովակիայի էներգետիկ հաշվեկշռում ատոմայինի մասնաբաժինը կհասնի 77 տոկոսի, եւ այդ ցուցանիշով իրենք առաջ կանցնեն Ֆրանսիայից, որտեղ այդ ցուցանիշը 67 տոկոս է:

Երկու տարի առաջ՝ 2024 թվականի օգոստոսի 1-ին, կառավարությունը որոշեց ստեղծել «Ատոմային նոր էներգաբլոկի կառուցում» փակ բաժնետիրական ընկերություն, որը պետք է երկու տարվա ընթացքում որոշեր նաեւ, թե ինչ տիպի ատոմակայան է կառուցվելու Հայաստանում եւ որ երկրի օգնությամբ: Երբ այդ որոշումը կայացվում էր, այն ժամանակ տարածքային եւ ենթակառուցվածների նախարարի պաշտոնը զբաղեցնող Գնել Սանոսյանը հայտարարեց, «Էներգետիկ ոլորտի մինչեւ 2024 թվականի ռազմավարության մեջ մենք ունենք, որ գործող ատոմակայանի հարթակում՝ հարակից տարածքում, գործող ատոմակայանի ժամկետի ավարտից հետո այդ փուլում ունենանք առնվազն նոր հզորության նոր էներգաբլոկ, որը կշարունակի գործող ատոմակայանի նման աշխատել: Այս գործընթացն ավելի կազմակերպված եւ համակարգային իրականացնելու համար առաջարկում ենք ստեղծել այս կազմակերպությունը»: Երկու տարի անց ոչինչ չի արվել, որեւէ առաջընթաց չի արձանագրված, միայն հայտնի է, որ իշխանությունն իբրեւ թե որոշել է, որ նոր ատոմակայանը լինելու է մոդուլային՝ փոքր հզորության, որ եթե հանկարծ վթար տեղի ունենա, դրա հետեւանքներից տուժեն միայն Հայաստանը եւ ՀՀ քաղաքացիները, բայց ոչ Թուրքիան կամ Ադրբեջանը:

Բայց թե ով է կառուցելու այդ մոդուլային ատոմակայանը, ինչ հզորությամբ, քանի մոդուլ է լինելու, ինչ արժեքով, ով է ֆինանսավորելու շինարարությունը, հայտնի չէ: Օրինակ, Սլովակիայում շահագործման հանձնված նոր էներգաբլոկը, որը, ինչպես նշեցինք, ունի մեր ատոմակայանի դրվածքային հզորությունը՝ 440 մեգավատ ժամ, արժեցել է 6,7 միլիարդ դոլար: Այսպես կոչված, մոդուլային ատոմակայանները որքան էլ փոքր լինեն, միեւնույն է՝ միլիարդավոր դոլարներ են արժենալու, Հայաստանն այդպիսի ծախսեր ֆինանսավորելու կարողություն չունի, պարտք ու վարկ էլ չեն տա, այնպես որ, քանի դեռ Փաշինյանն իշխանություն ունի, Հայաստանը նոր ատոմակայան չի ունենալու, հազիվ հինն է շահագործելու՝ միշտ ենթարկվելով էներգետիկ ճգնաժամերի:

Բայց Փաշինյանը գտել է առանց նոր ատոմակայան կառուցելու էներգետիկ ճգնաժամերից խուսափելու ճանապարհը՝ երկրում աշխատող ձեռնարկություններն ու ընկերությունները փակելու միջոցով, այդ ձեռնարկություններում աշխատող մարդկանց գործազուրկ դարձնելով, նրանց արտագաղթի մղելով: Եթե ձեռնարկությունները չաշխատեն, մարդիկ էլ արտագաղթեն, հետեւաբար էլեկտրաէներգիայի պահանջարկ չի լինի, եւ նոր ատոմակայան կառուցելու անհրաժեշտությունն էլ կվերանա: Թուրքիան, Ադրբեջանը եւ ԵՄ-ն իրենց աջակցությունն են հայտնում այս նոր եւ «առաջադեմ» ռազմավարությանը:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՄԱՐԴՆ Է ԳԵՂԵՑԿԱՑՆՈՒՄ ՄԱՆԴԱՏԸ

Աղվան Վարդանյանի՝ պատգամավորական մանդատը ստանձնելու մասին հայտարարությունը, մեղմ ասած, հիստերիայի մեջ է գցել մեծ թվով մարդկանց: Ափսոս, սակայն, որ այդ մարդիկ մեծ են միայն թվով, այն է՝ գլխաքանակով: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես անչափ երջանիկ եմ, որ այդ գլխաքանակի մեջ չկամ:

Իսկ հիմա խոսենք ավելի առարկայական: Ովքե՞ր են Աղվան Վարդանյանի որոշումից հիստերիայի մեջ ընկած այդ մարդիկ, ինչ խմբերի են բաժանվում, ում քաղաքական ձիանոցից են դուրս եկել, եւ ինչ է ուզածները: Աղվան Վարդանյանն իր գրառման մեջ բավականին կարճ ու կոռեկտ է արտահայտվել՝ չբացելով փակագծերը. «Պարզվեց՝ ինչ-որ մարդիկ շատ-շատ են ուզում, որ խորհրդարանում չլինեմ: Դրանց չեմ ուրախացնելու»: Չվնասելու համար պարոն Վարդանյանի կոռեկտությանը, ինքս էլ ձեռնպահ կմնամ անուններ հրապարակելուց, թեեւ շատերին գիտեմ թե՛ իրենց ապրած կյանքով, թե՛ ծագումնաբանությամբ, թե՛ ֆեյսբուքյան գրառումներից: Զուտ կսահմանափակվեմ վայրահաչողներին որոշակի խմբերի բաժանելով, եւ միայն այդքանը: Մի բան էլ նախապես պայմանավորվենք՝ ականջներիս օղ ենք անում, որ Աղվան Վարդանյանն այն քաղաքական գործիչներից ու մարդկանցից չէ, որոնք իրենց կյանքում երբեք ինքնուրույն որոշում կայացնել չեն կարողացել: Այս պահին էլ, երբ թվում է, թե ոհմակային հարձակման է ենթարկվել, ինքը նույն Աղվան Վարդանյանն է՝ հակիրճ խոսքով, հատու ոճով, փաստարկված ասելիքով եւ արդեն կայացրած սեփական որոշումով. «Խոսքը խոսք է, բայց ավելի կարեւոր է պարտքի գիտակցումը… Այս փուլում իմ պարտքն է՝ լինել թիմի հետ»:

Պարտքից էլ կսկսենք… Տեղի ունեցածից հիստերիայի մեջ ընկածների առաջին խումբը հենց պարտքի զգացում չունեցողներն են: Չգիտեն՝ ինչ է դա: Իրենք միշտ եղել են կողմնակի անձինք, ավերմունքի վրա չարախնդացողներ, որպես կանոն՝ մի քար քարի վրա չդրած, անհետագիծ, բայց՝ սարսափելի լեզվանի: Ես սրանց կասեի երեւանյան կինտոներ, բայց վախենում եմ, որ Սունդուկյանի Պեպոն, Կակուլին ու Գիքոն նեղանան: Եվ, ուրեմն, մի եղեք թեթեւսոլիկ, մի քննարկեք հատկապես այն մարդկանց որոշումները, որոնք ծնվում են պարտքի զգացումից: Փարձեք հասկանալ, թե հանուն ինչի եք ապրում, եւ դրա համար ձեզ ինչ է պետք:

Մի բավականին զավեշտալի խումբ էլ կա, որ Աղվան Վարդանյանին հանդիմանում է, թե տղամարդու խոսք ես տվել՝ մանդատը չվերցնել, բայց վերցնում ես: Ես անհիմաստ եմ համարում այս մարդկանց լրացուցիչ անգամ բացատրել, որ մենք գործ ունենք քաղաքականության հետ, իսկ քաղաքականությունը հնարավորությունների արվեստ է: Չեն հասկանա… Թե բա՝ տղամարդու խոսք… Իրենց էլ որ նայում ես, մեջները մի հատիկ տղամարդ տղա չկա: Հարյուր քաղաքական ճամբար փոխած, հարյուր քաղաքական գործչի քսմսված, լոճած բերանով, սեփական անձի մասին մեծ կարծիք ունեցող հացկատակներ: Սրանք, ուրեմն, սրտատրոփ սպասել են Աղվան Վարդանյանի՝ մանդատը վերցնել-չվերցնելուն: Չվերցներ՝ չէին ասելու՝ խոսքը պահեց: Աղմկելու էին, թե վախեցավ գնալ խորհրդարան, որ ՔՊ-ի «հարվածների տակ չընկնի»: Հիմա, երբ Աղվան Վարդանյանը վերցնում է մանդատը, սրանք անակնկալի են եկել ու իրենց արեւին «տղամարդու» զրից սկսել՝ թե բա՝ խոսք էիր տվել…

Ուրիշ խմբեր էլ կան, որ քունուդադարը կորցրել են մեր խորհրդարանի ամենաընդգծված անհատականություններից մեկի՝ Աղվան Վարդանյանի որոշումից: Սրանք այն խմբերն են, որ գիշերուզօր աղոթում են Նիկոլի անսահմանափակ իշխանության համար, սպասում, թե երբ պիտի վերջապես Նիկոլը 100 տոկոս մեծամասնություն ունենա Ազգային ժողովում: Այդ խմբերի հաշվարկներով, ո՛չ Աղվան Վարդանյանը եւ ո՛չ էլ «Հայաստան» դաշինքը խորհրդարան չպետք է անցնեին: Սակայն կյանքը ցույց տվեց հակառակը: Ավելին՝ կյանքը ցույց տվեց, որ իրենց սիրեցյալը 50 տոկոս էլ չունի խորհրդարանում: Բա ի՞նչ անենք… Դավայ կախվենք Աղվան Վարդանյանի «ժողգործիքներից»… Եվ կախվել են, որովհետեւ Աղվան Վարդանյանը, ի հեճուկս իրենց, դեռ քարոզարշավից առաջ էր հայտարարել, որ «Հայաստան» դաշինքը լինելու է խորհրդարանում:

ՀԳ. *Չզարմանաք, բայց ուզում եմ հատուկ շնորհակալություն հայտնել Անահիտ Ավանեսյանին եւ Նիկոլ Փաշինյանին՝ Հայաստանում առողջապահական համընդհանուր ապահովագրության համակարգ ձեւավորելու փորձերի համար: Դուք՝ տիկին Ավանեսյան եւ պարոն Փաշինյան, շատ լավ եք ճանաչում մեր հասարակության հիվանդ հատվածին եւ գիտեք, թե նրան առաջին հերթին ինչ է պետք: Մյուս կողմից էլ՝ դեռ վաղ է հանգստանալ ձեռք բերվածով: Պետք է ամեն ինչ անել, որ մեր երկրում անասնաբուժությունը եւս լինի անվճար:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՊԱՀԱՆՋ

ԿԱՐՈՂ ԵՆ ՆԱԵՎ ՀԱՆՐԱՔՎԵՆ ԿԵՂԾԵԼ

Իլհամ Ալիեւի՝ արտաքին հարաբերությունների գծով խորհրդական Հիքմեթ Հաջիեւը նախօրեին հանդես է եկել հերթական հայտարարությամբ, որը դարձյալ վերաբերում էր Հայաստանի սահմանադրության փոփոխությանը: Նա ասել է. «Սահմանադրական փոփոխությունների ձեւը Հայաստանի ներքին գործն է: Ադրբեջանի համար կարեւոր է, որ այն դրույթները, որոնք մենք գնահատում ենք որպես մեր երկրի նկատմամբ տարածքային պահանջներ, պաշտոնապես վերացվեն՝ լինի դա նոր սահմանադրության ընդունման, թե այլ իրավական մեխանիզմի միջոցով: Երբ այդ հարցը լուծվի, կարծում ենք, որ վերջնական խաղաղության համաձայնագրի ստորագրման համար այլեւս որեւէ խոչընդոտ չի մնա»:

Քաղաքագետ **Հրանտ Միքայելյանը** «Հրապարակի» հետ զրույցում ասաց՝ ակնհայտ է, որ Ադրբեջանի թելադրանքով ուզում են Հայաստանին վերջնական կապիտուլյացիա պարտադրել, որը կլինի Ադրբեջանի պահանջով սահմանադրություն գրելը: «Սա, իհարկե, ենթադրում է նաեւ, որ Սահմանադրությունը պետք է ընդունվի, ինչպես Ալիեւն ասաց, հայ ժողովրդի կողմից: Եվ այսպիսով, փորձում են պարտադրել ճնշումով, բռնաճնշումներով՝ Հայաստանում, եւ պարտադրել Ադրբեջանից ճնշումներով: Հաջիեւի հայտարարությունն էլ իրականությանը չի համապատասխանում, որովհետեւ արդեն Հայաստանի սահմանադրական դատարանը տարիուկես առաջ այս պրեամբուլան այլեւս հնացած է համարել, եւ այն այլեւս չի գործում: Այսինքն, եթե նրանք ստորագրել են, որ պրեամբուլան չի գործում, ուրեմն այն չի գործում, ասել կուզի՝ կեղծ է: Նրանք ուզում են պարտադրել Փաշինյանին, եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ, միեւնույն է, դա չի ստացվելու Փաշինյանի մոտ, որովհետեւ ընդդիմությունը բավականին ներկայացված է խորհրդարանում, շարունակում են ճնշում գործադրել, որ միշտ փաստարկ ունենան, որ Հայաստանը մեղավոր է: Եվ որ դա չի կատարվում, Հայաստանը չի անում, եւ փաստարկ ունենան, թե ինչու խաղաղության պայմանագիրը չեն ստորագրում»,- ասաց քաղաքագետը: Այն բանակցային գործընթացը, որ կա, խաղաղության գործընթացի հետ որեւէ կապ չունի, դա միակողմանի զիջումների գործընթաց է՝ նկատում է Միքայելյանը:

Ըստ քաղաքագետի, Ադրբեջանն իր համար ստեղծում է լուծումների դաշտ, որտեղ ինքը մի քանի լուծում ունի, մանեւրելու դաշտ: «Երբ Հայաստանի իշխանությունները գնում են մի որոշման ուղղությամբ, ապա Ադրբեջանի իշխանությունները որոշումների դաշտը լայնացնում են. սա շատ կարեւոր դիվանագիտական եւ քաղաքական տարբերություն է: Ադրբեջանն ինքն իրեն է լավ վիճակի մեջ դնում, իսկ թե Հայաստանն ինչ է անում, դա արդեն Հայաստանի խնդիրն է»,- նկատեց քաղաքագետը: Իսկ ինչո՞ւ են Ադրբեջանում վստահ, որ հայ հանրությունը կմերժի Փաշինյանի ու Ալիեւի սահմանադրությունը, ասաց, որ նախորդ ժամանակաշրջանների հարցումները հստակ ցույց էին տալիս, որ ժողովուրդը մերժում է, իհարկե՝ տեսանք, թե ինչպես զոռբայությամբ, ճնշումներով անցկացվեցին այս ընտրությունները: «Դժվար է ասել, թե ինչ իրավիճակ է տիրելու հետագայում, բայց, ամեն դեպքում, իշխանությունները չունեն խորհրդարանում սահմանադրական մեծամասնություն, որպեսզի հանրաքվե անցկացնեն, իհարկե՝ կարող են փորձել ընդդիմությունից մի քանի պատգամավոր պոկել, դա չի բացառվում ներկա ձեւաչափով: Բացի այդ, նրանք կարող են փորձել էլի ճնշումներով ժողովրդին ստիպել՝ քվեարկել իրենց օգտին, բայց մի քիչ դժվար եմ պատկերացնում: Եվ երրորդ տարբերակը՝ հանրաքվեն կեղծեն, հատկապես որ Հայաստանում հանրաքվե կեղծելու փորձ էլ կա: Գիտեք, մասամբ երեւի Ձեզ հետ համաձայնեմ, որ այն համոզմունքը, որ ես ունեի՝ հիմնված իրավիճակի ու դասավորվածության վրա, որ հանրաքվեով դա անցկացնել հնարավոր չէ, դա էլ քիչ-քիչ հնանում է, եւ, այո, գուցե դա էլ ստացվի: Այս պահի դրությամբ դեռ քիչ հավանական է, բայց Փաշինյանը շատ ինտենսիվ աշխատում է այդ ուղղությամբ՝ գուցեեւ ստացվի: Այս պահի դրությամբ արդեն երեւի թե ճիշտ մեկնաբանություն կլինի իմ կողմից, որ այլեւս բացառել չենք կարող, չնայած հանրային աջակցություն չկա, եւ բազմաթիվ խանգարող հանգամանքներ կան: Կան մեթոդներ, եւ Փաշինյանը դրանք կիրառում է՝ իր նպատակին հասնելու համար»,- շեշտեց Միքայելյանը:

Սահմանադրագետ **Վահե Գրիգորյանն** էլ կարծում է, որ չի կարելի ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառմամբ կնքել որեւէ պայմանագիր, այդ թվում եւ՝ խաղաղության պայմանագիր: Հետեւաբար, ցանկացած նմանատիպ ակնարկ, նկրտում, որը կարող է իրական լինել, միջազգային պայմանագրերի վերաբերյալ, միջազգային օրենսդրության եւ դրանից զատ նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, ըստ էության, կարող է հանգեցնել նման պայմանագրի անվավերություն կամ առոչինչ ճանաչվելու՝ արդեն կոնկրետ փաստով պայմանավորված: «Առավել խնդրահարույց է, որ կոնկրետ առաջարկ է արվում՝ շրջանցել սահմանադրական կարգավորումները, իսկ հաշվի առնելով փորձը, որն իշխանությունների կողմից բազմիցս սահմանադրության շրջանցման եւ կոպտագույն խախտման դեպքերն են, բացառված չէ, որ հերթական նոր ու ավելի կոպիտ դեպքին ականատես կլինենք, որը, իհարկե, կփաթեթավորվի «հանուն խաղաղության» թեզով»,-ասաց Գրիգորյանը: Սահմանադրագետը շեշտում է, որ ինքն անգամ վստահ չէ, որ հանրաքվեի անցկացման պարագայում այդ հանրաքվեին կմասնակցի այնքան մարդ, որը բավարար կլինի հանրաքվեի դրված ակտի ընդունումը կամ մերժումը քննարկելու համար, որովհետեւ, ի տարբերություն մյուս ընտրությունների, հանրաքվեն հստակ տեխնիկական, մաթեմատիկական քանակ ունի, որքան անձ պետք է մասնակցի, ու մասնակցողների քանի տոկոսը պետք է կողմ քվեարկած լինի: «Ինչ վերաբերում է Ադրբեջանի կողմից անընդհատ արծարծվող պատճառաբանությանը, թե ներկա Սահմանադրությունը տարածքային պահանջներ է պարունակում Ադրբեջանի նկատմամբ, բազմիցս առիթ եմ ունեցել ասելու՝ չկա նման բան: Եթե հղում են տալիս Անկախության հռչակագրին, ապա Անկախության հռչակագրում որեւիցե նման պահանջ չկա, այլ կա Հայաստանի Հանրապետության ստանձնած հանձնառությունը՝ պաշտպանել Լեռնային Ղարաբաղի հայության իրավունքներն ու ազատությունները: Դա տարածքային պահանջ չի ենթադրում, դա ենթադրում է էքստերիտորիալ, պայմանական ասած՝ ոչ տարածքով պայմանավորված պահանջ-պարտականություն: Օրինակ, ներկայում էլ, երբ թեկուզ այս կառավարությունը որոշակի սոցիալական օժանդակություն-օգնություն է ցույց տվել Լեռնային Ղարաբաղից Հայաստան բռնի տեղահանված անձանց, դա նույնպես Անկախության հռչակագրից բխած պահանջ է: Հարցն այն է, որ կառավարությունում, թերեւս վստահ եմ, որ չկա բարձր իրավագիտակցություն ունեցող անձ, որը կարողանար հասկանալ իրավական, օրինակ, Անկախության հռչակագրի կամ այլ բարձր իրավաբանական ակտերի ճիշտ մեկնաբանումը եւ դրանց էությունը կարողանար պատշաճ կիրառել»,- եզրափակեց Վահե Գրիգորյանը:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՈՎ ԷՐ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԸ ՆԱՏՕ-Ի ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎՈՒՄ

Անկարայում տեղի ունեցած ՆԱՏՕ-ի 36-րդ գագաթնաժողովի վերաբերյալ քննարկումները շարունակվում են: Ռուս քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովի ուշադրությունը գրավել է այն, որ Վրաստանն այդ գագաթնաժողովին ներկայացված էր ո՛չ նախագահի եւ ո՛չ էլ վարչապետի մակարդակով: 20 տարի շարունակ իր ռազմավարական նպատակն այդ կառույցին անդամակցելու մեջ տեսած Վրաստանն այդ գագաթնաժողովին ներկայացված էր ավելի ցածր կարգավիճակով: Ու սա՝ այն դեպքում, երբ 2008-ին, նախագահական ընտրություններին զուգահեռ, տեղի է ունեցել նաեւ համաժողովրդական հանրաքվե՝ այդ կառույցին անդամակցության վերաբերյալ:

Թբիլիսին Անկարայի գագաթնաժողովին ներկայացված է եղել ԱԳ նախարար Մակա Բոչորիշվիլու մակարդակով: Նա մասնակցել է «Դաշնակիցները՝ Անկարայում» միջոցառմանը, որը կազմակերպել էին անվտանգային հարցերով մյունխենյան կոնֆերանսը, Թուրքիայի հաղորդակցությունների վարչությունն ու SETA հիմնադրամը: Միջոցառումը ՆԱՏՕ-ի պաշտոնական միջոցառումների ցանկում չկար: Սա արդեն երկրորդ անգամն է, որ Վրաստանը հայտնվել է ՆԱՏՕ-ի բարձրագույն մակարդակով նախատեսված միջոցառումների ֆորմատից դուրս: Հաագայի 2025 թվականի գագաթնաժողովին Վրաստանն առաջին անգամ ներկայացված չի եղել, իսկ ամփոփիչ հռչակագրում նրա անդամակցության մասին որեւէ հաստատող պարբերություն չի եղել: Այն դեպքում, երբ նման հավաստիացումներ տրվել են՝ սկսած 2008 թվականից: Այս տարի այլ էր: Թուրքիան Վրաստանի հարեւան երկիրն է: Վրաստանն ու Թուրքիան մասնակցում են բազմաթիվ նախագծերի, այդ թվում՝ նաեւ պաշտպանական եւ անվտանգային ոլորտներին առնչվող: Անկարայի այս տարվա գագաթնաժողովը կարեւոր ներքաղաքական թեմա է դարձել ներվրացական հասարակական-քաղաքական քննարկումների օրակարգում: Ընդդիմությունը, բնականաբար, մեղադրել է իշխանություններին եւ իշխող քաղաքական մեծամասնությանը՝ ռուսամետության, Ռուսաստանի օգտին արված զիջումների մեջ: Պառլամենտական իշխող ֆրակցիայի ներկայացուցիչ Գիյա Վոլսկին էլ հակադարձել է, թե ընդդիմությունը զբաղվում է միայն քարոզչական արշավով: Իշխող կուսակցությունը հորդորում է հարցերն ուղղել գագաթնաժողովի կազմակերպիչներին եւ իրավիճակը բացատրում է գագաթնաժողովի ֆորմատի փոփոխությամբ: Ընդդիմությունը, սակայն, առիթն օգտագործում է եւ փորձում հարցն ուռճացնել ներքաղաքական հարթակում:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

145 հազար երեխա մանկապարտեզ չի հաճախում

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին հարցում եմ արել՝ Հայաստանում նախադպրոցական կրթության մեջ ընդգրկված եւ չընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների թվի վերաբերյալ: Նախարարությունից հայտնել են. «2025-2026 ուսումնական տարում նախադպրոցական կրթության մեջ ընդգրկված երեխաների թիվը շուրջ 91 000 է: Տվյալներն ըստ մարզերի՝ հասանելի են https://reports.emis.am/#/preschools-manual-reports հղմամբ: Նախադպրոցական հաստատություններ չհաճախած երեխաների թվի մասին տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ վիճակագրական կոմիտե»: Պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն՝ նախադպրոցական տարիքի (մինչեւ 6 տարեկան) երեխաների ընդհանուր թիվը Հայաստանում կազմում է շուրջ 236 հազար երեխա: Անցած ուստարում նախադպրոցական տարիքի շուրջ 236 հազար երեխայից 91 հազարն է նախադպրոցական կրթության մեջ ընդգրկված եղել, այսինքն՝ մանկապարտեզ հաճախել: Դա նշանակում է, որ շուրջ 145 հազար երեխա զրկված է եղել այդ կրթությունից:

ԴԻԼԻՋԱՆԻ ՔՊ-ԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՁԱԽՈՂՎԱԾ ԾՐԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ

Սեպտեմբերի 25-ին, ամենայն հավանականությամբ, Դիլիջան համայնքում կկայանան համայնքի ավագանու ընտրություններ: Դիլիջան համայնքը 2021թ. փետրվարի 26-ից ղեկավարող, ՔՊ կուսակցության Դիլիջանի տարածքային կազմակերպության ղեկավար Դավիթ Սարգսյանը պատրաստվում է մասնակցել այդ ընտրություններին: Նա Ֆեյսբուքի իր էջում հրապարակել է Դիլիջան համայնքում կատարված աշխատանքների վերաբերյալ լուսանկարներ. մինչեւ աշխատանքների իրականացումը արված լուսանկարների վրա մակագրել է՝ «առաջ», աշխատանքների ավարտից հետո արված լուսանկարներ՝ «հիմա», որպեսզի փոփոխություններն ակնառու լինեն:

Բայց Դիլիջանում շատ են չլուծված խնդիրները: Տուրիստական քաղաքում գյուղատնտեսական շուկա չկա, գյուղմթերքներ, մրգեր վաճառողներն առեւտուր են անում փողոցներում կայանած ավտոմեքենաներից, կամ՝ դրանք փողոցներում ուղղակի գետնին են դրված: Դիլիջանում հասարակական զուգարաններ չկան, ինչն անհարմարություններ է պատճառում դիլիջանցիներին, քաղաքի հյուրերին, մեծաթիվ զբոսաշրջիկներին: Քաղաքի շատ փողոցներ անբարեկարգ են, փոսառատ, աղբահանությունը վատ է կատարվում, այդ պատճառով վերջերս համայնքի ղեկավար Դ. Սարգսյանն ազատեց աղբահանություն իրականացնող կոմունալ հիմնարկի ղեկավար Հայկ Մնացականյանին: Դիլիջան համայնքի աղբավայրը ցանկապատված չէ, այնտեղ մշտապես արածում են կովեր, որոնք սնվում են աղբավայրի թունավոր նյութերով եւ, ըստ ամենայնի, թունավոր կաթ են տալիս: Այդ աղբավայրում հաճախ հրդեհներ են լինում, ծուխը, ծանր հոտը տարածվում են միջպետական ավտոճանապարհին, գեղատեսիլ Աղստեւի հովտում: Սակայն Դ. Սարգսյանը Ֆեյսբուքի իր էջում այս հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկատվություն եւ լուսանկարներ չի հրապարակել: Նա Ֆեյսբուքում տեսանյութ է տեղադրել Դիլիջանի Գետափնյա փողոցի ասֆալտապատման մասին, կից դնելով «առաջ՝ հիմա» հեշթեգը եւ գրելով, որ Դիլիջանում 13 միլիարդ դրամի ներդրում է իրականացվել:

Իսկ Գետափնյա փողոցի ծրագիրը ձախողված ծրագիր է, Դ. Սարգսյանը ճիշտ կաներ, եթե դրա մասին առհասարակ լռեր: Սուբվենցիոն այդ ծրագրի արժեքի 60 տոկոսը ներդրել է համայնքը, 40 տոկոսը՝ պետական բյուջեն: Հանրային հեռուստաընկերության 2025թ. հուլիսի 21-ի ռեպորտաժում ասվում է, որ ծրագրի արժեքը 894 միլիոն դրամ է, ծրագրի պայմանագիրը կնքվել է 2023թ. հուլիսի 10-ին: Այդ ռեպորտաժում նշված է, որ աշխատանքները կավարտվեն 2025-ին: Սույն ծրագիրը պետք է համարվեր 4-րդ կարգի բարդության, 4-րդ կարգի բարդության օբյեկտների նախագծերը պետք է պարտադիր քաղաքաշինության կոմիտեում համալիր փորձաքննության ենթարկվեն, սակայն Գետափնյա փողոցի ծրագիրը 4-րդ կարգի բարդության չեն համարել, այն փորձաքննություն չի անցել: Այդ ծրագրով արված շատ գնումների գները մեծ չափով ուռճացած են, շինաշխատանքներն արվել են նախագծին ոչ համապատասխան: Նախագծով նախատեսված է գետափնյա հենապատերի մաշված քարերի փոխարինում բազալտե քարերով, սակայն դրանց տեղում բետոն են արել, ինչը խաթարում է հենապատերի տեսքը: Նախագծով նախատեսված է 2,4 կմ երկարությամբ, ամբողջական գծով ջրահեռացման խողովակների տեղադրում, սակայն այն արել են հատվածաբար, որի հետեւանքով ոչ թե նախագծով նախատեսված 2 տեղ են ծակել գետափնյա հենապատը, այլ՝ 10-ից ավելի տեղեր: Նախագծով նախատեսված է, որ այդ փողոցի մայթերի նոր տեղադրված սալիկների տակ պետք է բետոնապատվեր, սակայն դա չեն արել: Նախագծով նախատեսված է, որ ավելի քան 2 կմ երկարությամբ փողոցի ամեն քառակուսի մետրում, ասֆալտապատումից առաջ 20 կգ ցեմենտ պետք է լցվեր, սակայն չի արվել:

Հունվարի 29-ին հարցում էի արել համայնքապետ Դավիթ Սարգսյանին. «Որքա՞ն է Դիլիջանի Գետափնյա փողոցի կառուցապատման, ասֆալտապատման, փողոցին հարակից մայթերի բարեկարգման սուբվենցիոն ծրագրի արժեքը, ե՞րբ է ծրագրի սկիզբը, ե՞րբ է այն ավարտվելու, ծրագրի նախագծի եւ կատարված աշխատանքների միջեւ որքա՞ն տարբերություններ կան»: Դ. Սարգսյանը չի պատասխանել հարցմանը: Կառավարության 2026թ. փետրվարի 12-ի թիվ 142-Ա որոշման համաձայն՝ ՀՀ-ում կիսատ մնացած բազում ծրագրերի, այդ թվում՝ Դիլիջանի Գետափնյա փողոցի բարեկարգման ծրագրի վերջնաժամկետը հետաձգվել է մինչեւ 2027թ. հունիսի 30-ը: Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետը Ֆեյսբուքում անհարկի գովել է նախագծից մեծ շեղումներով իրականացվող, կիսատ, հետաձգված սուբվենցիոն ծրագիրը:

Նյութերը՝ Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆԻ

ՎԱՀԱԳՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԸ ԲՌՆԵԼ՝ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՀՈԴՎԱԾԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՈՐՈՇԵԼ

Սահմանադրական դատարանը մի քանի օր առաջ հրապարակեց ընտրությունների արդյունքների վիճարկման գործով իր որոշման ամբողջական տեքստը՝ ներկայացնելով այն հիմնավորումներն ու իրավական դիրքորոշումները, որոնց վրա հիմնվել է դատարանի վերջնական եզրակացությունը, այն է՝ ԿԸՀ որոշումն օրինական է, եւ այն հարկավոր է ուժի մեջ թողնել, ըստ այդմ՝ ՍԴ-ն ճանաչում է հունիսի 7-ի ընտրությունների արդյունքները:

Որոշման բովանդակության, դրա իրավական նշանակության եւ հնարավոր հետեւանքների մասին զրուցել ենք փաստաբան **Տաթեւիկ Սողոյանի** հետ, որը նաեւ դիմող քաղաքական ուժերից մեկի ներկայացուցիչն էր ՍԴ-ում:

- Սահմանադրական դատարանի որոշման ամբողջական տեքստում առկա հիմնավորումներից կարելի՞ է եզրակացնել, որ դատարանն այս կամ այն կերպ հաստատել կամ ընդունել է ընտրախախտումների առկայությունը:

- ՍԴ որոշման տեքստում ասվում է, որ, իհարկե, նորմալ չի եղել, որ այս ամեն ինչը եղել է, մենք շատ կուզեինք, որ բոլոր պետական մարմիններն ավելի լավ աշխատած լինեին, այսինքն՝ ըստ էության, համաձայնում է այդ խախտումների գոյության հետ, համաձայնում է, որ ԿԸՀ-ն աշխատանքը չի կազմակերպել այնպես, որ տվյալ ընտրատեղամասերում մինչեւ ուշ ժամը քվեարկություն չլիներ, որ հետո էլ անվավերության հիմք ստեղծեր: Այսինքն, ընդունում է որպես սխալ՝ ուղղակի մի փոքր անկյունները կլորացնելով: Բայց ասում է՝ քանի որ, ընդհանուր առմամբ, ընտրությունների արդյունքը չեղարկելը ծայրահեղ միջոց է, եւ պետք է բոլոր տեղերում այնպիսի լայնածավալ խախտումներ տեսնեինք, որ ասեինք՝ ժողովրդի կամքի արտահայտման ընդհանուր պատկերն է աղավաղված եղել, քանի որ մենք այդպիսի հետեւության չենք գալիս, ապա ընտրություններն անվավեր չենք ճանաչում, բայց, իհարկե, արձանագրում է, որ դիմումատուների բողոքի փաստական հիմքերը, այո, ճշմարիտ են:

- Արդյո՞ք նույն սկզբունքով ՍԴ-ն նաեւ ԲՀԿ-ի՝ խորհրդարան չանցնելու հարցում է խնդիրներ արձանագրել:

- ԲՀԿ-ի մասով էլ նույն կերպով անկյունները կլորացնելով, չանդրադառնալով, խորությամբ չվերլուծելով 101-րդ հոդվածի առաքելությունը, խուսափելով նշել է, որ քանի որ հիմա նորմի սահմանադրականություն չի քննարկվում, չեմ կարող քննարկել կամ չեղարկել այդ նորմը եւ նոր փաստի առաջ կանգնեցնել, հետեւաբար ասում է, որ, այո, թեեւ սխալ է եղել այս ամեն ինչը, բայց այս ամենը, ըստ էության, չի ազդել ընտրության ընդհանուր պատկերի վրա: Եվ վերաքվեարկություն չներկայացնելու հարցով շատ տարօրինակ ՔՊ-ական որոշում է բերել դատարանը, որում ասվում է, որ եթե մենք հիմա վերաքվեարկություն նշանակենք ու այդ ընտրատեղամասի ընտրողներին նորից ընտրելու հնարավորություն տանք, մենք այդպիսով կվնասենք կամ կխախտենք ընտրություններին մասնակցած մնացած 1.4 մլն ընտրողների իրավունքը:

- Եթե 101-րդ հոդվածը սահմանադրականության խնդիր ունի, ինչո՞ւ այս հարցն իրավական հարթության մեջ չի լուծվում, եւ միայն իրենց ձեռնտու ժամանակ են հիշում ու շահարկում այս հանգամանքը:

- Սահմանադրականության հարցը կարող է միայն Սահմանադրական դատարանը որոշել, եւ դրա կիրառողները պարզապես սահմանափակված են այդ հոդվածով, պետք է վարվեն այնպես, ինչպես հոդվածն է պահանջում, իրենք ինքնուրույն սահմանադրականության որոշման լիազորություն չունեն: Հիմա Վահագն Հովակիմյանը բռնել՝ ինքնուրույն հոդվածի սահմանադրականություն է որոշել՝ իր լիազորությունները վերազանցելով, իսկ ՍԴ-ն էլ, որ այդ լիազորությունն ունի, ասում է՝ ես չեմ կարող դա իրացնել ընտրական վեճի սահմաններում, պետք է առանձին այդ հարցով դիմեք, որ քննության առարկա դառնա, ու էլի հրաժարվել է նորմը մեկնաբանելուց: Ու հիմա ունենք տոտալ աբսուրդային վիճակ, երբ այն մարմինը, որն ունի դրա լիազորությունները, հրաժարվում է անել այդ գործառույթը, իսկ այն մարմինը, որը չունի դրա լիազորությունը, դա անում է:

- Քաղաքական ուժերը պատրաստվո՞ւմ են միջազգային ատյաններում վիճարկել ՍԴ որոշումը, եւ ի՞նչ ժամկետներ են այս մասով սահմանվում:

- Ես չեմ կարող այս հարցը մեկնաբանել, քանի որ դեռեւս նման քննարկում չկա: Եթե չեմ սխալվում, եթե որոշեն ՄԻԵԴ դիմել, գործելու է քառամսյա ժամկետը:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ Է

Վայոց ձորի մարզի Արտաբույնք բնակավայրի վարչական ղեկավար Արմեն Սետրակյանը դատական հայց է ներկայացրել Արարատի եւ Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ղեկավարի, եւ պահանջել անվավեր ճանաչել նրա 29.08.2025 թվականի թիվ 92Ա կարգադրությունը:

Մեր տեղեկություններով՝ Արմեն Սետրակյանն Արտաբույնք բնակավայրի վարչական ղեկավար է նշանակվել 2017 թվականին: Արտաբույնք համայնքն ունի 1000-ից ավելի բնակիչ: 2021 թվականին իշխանությունը ՏԻՄ օրենքում նոր փոփոխություններ արեց, ըստ որի առաջարկվեց, որ 1000-ից ավելի հաշվառված բնակիչ ունեցող բնակավայրի վարչական ղեկավարը պետք է ունենա բարձրագույն կրթություն: 2022 թվականին, երբ խոշորացվեց Եղեգիս համայնքը, խոշորացված համայնքի ղեկավար դարձավ ՔՊ-ական Արթուր Ստեփանյանը: Հիշեցնենք, որ նա մեղադրվում է իրեն վստահված գույքի առանձնապես խոշոր չափերով հափշտակության, ինչպես նաեւ՝ պաշտոնեական կեղծիքի մեջ, սակայն պաշտոնի կասեցումից տարիուկես հետո նա վերադարձել է աշխատանքի:

Արթուր Ստեփանյանը 2022 թվականին կրկին Արմեն Սետրակյանին նշանակում է վարչական ղեկավար: Սետրակյանը Եղեգնաձորի տարածաշրջանի ԵԿՄ վարչության անդամ է, Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Աննա Դանիելյանի ամուսինը: 2025 թվականին Սետրակյանին աշխատանքից ազատում է համայնքապետի առաջին տեղակալ, համայնքապետի ԺՊ Ահարոն Գաբրիելյանը: Ազատման պատճառը Սետրակյանի բարձրագույն կրթություն չունենալն է եղել: Պարզ չէ, թե ինչպես է օրենքի պահանջին չհամապատասխանող անձը նշանակվել վարչական ղեկավար: Օրեր առաջ հերթական դատական նիստն էր: Եղեգիսի համայնքապետ Արթուր Ստեփանյանը, որը դատարանում հանդես էր գալիս որպես պատասխանողի ներկայացուցիչ, հայցի դեմ որեւէ առարկություն չհայտնեց՝ հարցի լուծումը թողելով դատարանի հայեցողությանը: Դատարանը որոշում կկայացնի հուլիսի 20-ին: Համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Աննա Դանիելյանին հարց ուղղեցինք՝ ճի՞շտ է, որ Ձեր ամուսնուն աշխատանքից ազատել են, քանի որ չունի բարձրագույն կրթություն: «Դուք այդ հարցն ուղղեք իր գործատուին, ես այդ հարցերին պատասխանելու իրավունք չունեմ»,- ասաց Դանիելյանը: Պարզ չէ, թե ինչու պետք է օրենքի պահանջով կայացված հրամանը դատարանը չեղարկի եւ անվավեր ճանաչի:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կալանավորվածների եւ հարազատների միջեւ կապը վերականգնվել է

«Հրապարակին» են դիմել «Արմավիր» ՔԿՀ-ից մի խումբ դատապարտյալներ եւ հայտնել, որ կալանավայրից իրենց հարազատների հետ կապվելու միջոցը՝ հեռախոսը, աշխատում է ինտերնետ կապով, որը հաճախ ընդհատվում է, եւ դրանից չեն կարողանում օգտվել: Պատճառաբանում են, որ ինտերնետ չկա՝ կապ չկա, չեն կարող զանգել, եւ հաճախ զրկված են ընտանիքների հետ կապից, ոչ մի լուր չունեն նրանցից, իսկ դեպքեր են լինում, որ զանգահարելը շատ անհրաժեշտ է, ասենք՝ տանը հիվանդ ունեն, կամ ինչ-որ դեպք է եղել: Նամակը մեզ գրել են հուլիսի 6-ին, այն «Հատուկ կապով» տեղ է հասել 10 օր անց: Երեկ մենք քրեակատարողական ծառայությունից հարցի վերաբերյալ պարզաբանում խնդրեցինք, մեզ փոխանցեցին. «Օպտիկական մալուխի վնասման պատճառով ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում հուլիսի 6-ին խափանվել են կապի ծառայությունները, այդ թվում՝ հեռախոսակապը: Խնդիրը հնարավորինս արագ լուծելու համար անմիջապես կապ է հաստատվել ծառայություն մատուցող հեռահաղորդակցական ընկերությունների հետ, որոնց կողմից շուրջ մեկ օր կատարված աշխատանքների արդյունքում կապը վերականգնվել է: Հարկ է նշել, որ նմանատիպ խնդիրները չեն կրում պարբերական բնույթ, իսկ առաջանալու դեպքում, որպես կանոն, դրանք լուծվում են 1-2 ժամվա ընթացքում»: Հուսանք, որ հենց այսպես է իրականությունը՝ խնդիրը կարգավորվել է: Կսպասենք ՔԿՀ-ից հետադարձ կապի: Ազատազրկված, ընտանիքներից մեկուսացված մարդիկ իրավունք ունեն անխափան կապ ունենալու իրենց հարազատների հետ: Ազատազրկումը չի նշանակում հարազատների հետ շփումից զրկում եւ լրացուցիչ պատիժների կիրառում:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 18.07.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԵՍ ԿՅԱՆՔՈՒՄ ՉԷԻ ՄՏԱԾԻ, ՈՐ ԻՄ ԾՆՆԴԱՎԱՅՐ ՍՅՈՒՆԻՔԸ ԿԱՐՈՂ Է ԴԱՌՆԱԼ ԿՌՎԱԽՆՁՈՐ

«Հրապարակն» այսօր շատ հետաքրքիր զրուցակից ունի: Թերթի կրպակում աշխատող **տիկին Անահիտն** ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտը, աշխատել է որպես ինժեներ, մանկավարժ, իսկ վերջին տարիներին «Հայ մամուլի» կրպակում կրպակավար է աշխատում: Տիկին Անահիտը ծնունդով Գորիսի Տեղ գյուղից է, եւ ծննդավայրի բերումով ինքն էլ կպած է Արցախին: Դպրոցն ավարտելով 1980 թվականին՝ ընտանիքով տեղափոխվել է Երեւան՝ ուսումը շարունակելու նպատակով: 2013 թվականից աշխատում է կրպակում. քաղաքի տարբեր թաղամասերի կրպակներում է աշխատել: Վերջինը Գրիգոր Լուսավորիչ փողոցի կրպակն է, որտեղ արդեն 1 տարի է աշխատում:

Տիկին Անահիտը սիրում է կարդալ, օրը սկսում է լրատվականներին ծանոթանալով, ինքն էլ է լրատվության սիրահար, հետաքրքրվում է քաղաքականությամբ: Բայց հեռուստատեսային լուրերը նրան չեն բավարարում, ասում է. «25 տարի կլինի՝ չեմ նայում հեռուստացույց: Ես միշտ ընթերցում եմ, իմ գաղափարին համապատասխան նորություններ եմ լսում»:

Մենք հետաքրքրվեցինք՝ իսկ ո՞վ է այժմ թերթ գնում-կարդում: Ասում է. «Իմ մոտից երիտասարդները թերթ չեն գնում, բայց, օրինակ, փոքր տղաս բոլոր նորությունները հեռախոսից, համացանցից է կարդում: Այո, հիմնականում համացանցից են օգտվում երիտասարդները: Մեր հասակակիցներն են թերթ առնում այսօր»: Նկատի ունի, որ 50-ն անց մարդիկ են թերթ գնում: «Խաչբառ են շատ գնում, մեծ տարիքի մասին է խոսքը, ասում են՝ հիշողությունը լավացնում է: Ընդդիմադիր թերթերից «Հրապարակն» են առնում»:

Տիկին Անահիտը նաեւ իր ընտանիքի ու ապրած կյանքի մասին պատմեց. «Ամուսինս Կապանից էր, մահացել է: Երեք տղա ունեմ, մեծ տղաս Ամերիկայում էր: Ես գնացի ԱՄՆ, 2 տարի ապրեցի Ամերիկայում, հետո տղայիս էլ ինձ հետ բերեցի Հայաստան: Նորից եկա ընդունվեցի աշխատանքի: Հենց իջա «Զվարթնոց» օդանավակայանում, ուզում էի համբուրել մեր օդանավակայանի հատակը»:

Տիկին Անահիտը նաեւ ակտիվ քաղաքացի է եւ անտարբեր չէ մեր երկրում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ: «Մենք այս երկրի քաղաքացիներն ենք: Ոչ թե պետք է հետաքրքրվենք, այլ պարտավոր ենք իմանալ: Մարդիկ ստամոքսով մտածելով ասում են՝ ամեն ինչ լավ է, ամեն ինչ Թուրքիայից կգա՝ էժան կլինի, լավ կապրենք: Չեն մտածում, թե մեզ հետ ինչ կլինի: Ոտքի տակ կտան՝ կանցնեն»,- իրավիճակը վերլուծում է նա: Տիկին Անահիտը, լինելով սյունեցի, տագնապած է իր հայրենի Սյունիքի համար. «Սյունիքը ոնց որ դնենք մի քանի գազանների առջեւ՝ ամեն մեկը քաշի իր կողմը: Ով ինչ ասի, մեր ղեկավարությունն ասում է՝ ես համաձայն եմ, տալիս եմ: Ես կյանքում չէի մտածի, որ որտեղ ծնվել եմ, Սյունիքը կարող է լինել կռվախնձոր: Արցախը մեզ պահում էր, հիմա էլ Սյունիքը վերցնեն: Մի հատ Արարատյան դաշտավայր պահեն՝ գերեզմանների կամ թուրքերի համար կոֆե դնողներ»: Նիկոլ Փաշինյանի այցելությունը Սյունիք, Խուստուփի լեռ բարձրանալը եւս չեն վրիպել նրա աչքից. «Ինքն ուզեց այդ ամենով ասել, ցույց տալ թուրքերին, որ դա հայերի համար սրբավայր չէ: Չէ՞ որ Նժդեհն է այնտեղ թաղված... Սյունիքը պահող Նժդեհի մասին ոչ մի խոսք: Նիկոլը սրանով «քննություն» տվեց թուրքին ու ադրբեջանցուն: Այս քննությունն ինքը անցավ, «5» ստացավ: Բայց հայերս պետք է հասկանանք, որ մեզ համար սա խայտառակություն է... Ես, օրինակ, Նիկոլին չեմ ընտրել՝ «Բոլորին դեմ եմ»-ին եմ ընտրել: Մի օր մի ընդդիմադիր գործիչ եկել էր առեւտրի, ասացի իրեն. «Էլի պետք է հինգ տարի իրար վրա շի՞շ շպրտեք», պատասխանեց՝ չէ»:

Շուշան ՍԱՐԻԿՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am